

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1

Նախկին հորիզոնային Ֆայաստանի իջևանի շրջանի տարածքը, որն այսօր մտնում է Տավուշի մարզի կազմի մեջ, իր սահմաններով համապատասխանում է Մեծ Ֆայքի տասնչորսերորդ երկրամաս Գուգարքի առաջին գավառին՝ Չորոփորին, որը տարածվում է Աղստև գետի վերին և միջին հոսանքի ավազանում¹:

Աղստևի հովիտը իր բնական դիրքի ու բնակիչմայական նպաստավոր պայմանների շնորհիվ հնագույն ժամանակներից բնակեցված է եղել: Այս տարածքի հնէաբանական և հնագիտական վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախամարդու առաջին կացարանները Աղստև գետի վերին հոսանքի լեռնալանջերին ու քարանձավներում ի հայտ են եկել դեռևս պալեոլիթի ժամանակաշրջանում²:

Աղստևի հովիտում պահպանված դամբարանադաշտերն ու կիկլոպյան ամրոցները (Բարձրաբերդ, Աստղի բլուր, Թմբաղիք, Բուդուրի, Կոտաքարի, Թխկուտ ձորի, Օկունի, Սանգարի, Սրվանեսի (Սբ. Օհանես), Սուրբ Նահատակ) պատկանում են վաղբրոնզեդարյան (մ.թ.ա. IV հազարամյակի վերջ-III հազարամյակ), երկաթի (մ.թ.ա. XI-VII դդ.) և վաղ հայկական (մ.թ.ա. VI-V դդ.) ժամանակաշրջաններին: Աղստևի հովտի կիկլոպյան ամրոցները կառուցվել են անառիկ բարձունքների վրա և ունեցել են պաշտպանական ու տնտեսական նշանակություն: Դամբարանա-

դաշտերից, կիկլոպյան ամրոցներից ու պաշտամունքային կառույցներից պեղածո նյութական ու ծխապաշտամունքային առարկաները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այս տարածքում բնակվող ցեղերի զբաղմունքի (հողագործություն, անասնապահություն, որսորդություն) և հավատալիքների մասին³:

Աղստևի հովիտը վաղ միջնադարում կոչվել է Չոր (Չորա) կամ Չորոփոր գավառ⁴, որի անվանման համար հավանաբար հիմք է հանդիսացել նրա աշխարհագրական դիրքը: Ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, Վաղարշակը Չոր գավառը իբրև ժառանգություն հանձնել է Շարայի գավառներից Գուշարին⁵: «Յյուսիսային կուսակալությունը» կամ «Գուգարքի բղեշխությունը», որի կազմի մեջ մտել է Չորոփորը, հայ թագավորների կողմից դիտվել է որպես պատվար հյուսիսի ռազմաշունչ ու ավարառու ցեղերի հորձակումների դեմ: Աղստևի հովիտը ոչ միայն ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ուներ, այլև, որպես տարանցիկ ճանապարհ, Ֆայաստանի կենտրոնական գավառները կապում էր Վրաստանի և հյուսիսային երկրների հետ⁶: Սակայն 387թ. բաժանման դաշնագրի համաձայն Գուգարքի բղեշխության հյուսիսային գավառներն անցատվեցին Ֆայաստանից և անցան Վրաց թագավորությանը⁷:

Բազրատունիների թագավորության տարիներին (IX-XI դդ.) Աղստևի հովիտը միացվել է Ֆայաստանին և դեռևս Չորոփոր անունն է

¹ *Անանիա Շիրակացի*, Մատենագրություն, Ե., 1979, էջ 297, *Ֆակոյան Թ.*, Ֆայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 257, ՅՄՅ VI, Ե., 1980, էջ 713-714: *Մաթևոսյան Ռ.*, Տաշիր-Չորագետ, Ե., 1982, էջ 48:

² ՅՄՅ IV, Ե., 1978, էջ 383, *Pinhasi R, Gasparian B, Wilkinson K, Schreve D, Branch N, Nahapetyan S.* The archaeology of Hovk, north-east Armenia: a preliminary report, *Antiquity*, vol. 80, No. 308, June, 2006.

³ *Есаян С.*, Древняя культура племен северо-восточной Армении, Е., 1976, с. 13, *Լլարյան Ի.*, Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձանները, Ե., 1980, էջ 30-38:

⁴ *Մովսես Խորենացի*, Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 138, *Փավստոս Բուզանդ*, Ֆայոց պատմություն, Ե., 1987, էջ 247:

⁵ *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 138:

⁶ ՅԺՊ, I հտ., Ե., 1971, էջ 54:

⁷ ՅԺՊ, II հտ., Ե., 1984, էջ 112-118:

կրել⁸։ Հետագայում գավառի գլխավոր Կայան բերդի անունով, որի մասին առաջինը հիշատակում է Հովի. Դրասխանակերտցին, գավառը կոչվում է Կայենո (Կայան⁹), երբեմն նաև՝ Աղստի գավառ (Ստեփանոս Տարոնացի Ասողիկ¹⁰)։ Ուշ միջնադարում արդեն Կայան գավառանունին փոխարինել են Աղստի գավառ¹¹, երբեմն նաև Դրաղի ձոր անվանումները¹²։ Կայենո գավառը X դ. վերջից մինչև XII դ. սկիզբը եղել է Կյուրիկյան թագավորության, իսկ XII-XIV դդ.՝ Ջաջարյանների իշխանության կազմում։ Միջնադարում գավառը տնտեսական ու մշակութային վերելք է ապրել։ Երկրամասի պաշտպանությունն ապահովելու համար լեռնային և դժվարամատչելի բարձունքներում կառուցվել են մի շարք բերդեր՝ Կայան (X դ.), Կայծուն (Մանթաշ) (X դ.), Գավարգին, Մահկանաբերդ (XII դ.), որոնցից Կայանը և Մահկանաբերդը նաև իշխանանիստ ամրոցներ են եղել։ Միջնադարում Կայենո գավառը խիտ բնակեցված է եղել, որի մասին վկայում են բազմաթիվ բնակավայրերի ավերակները, տնտեսական նշանակության շինությունների, կամուրջների, քարավանատների մնացորդները, ճարտարապետական կոթողները և այլն¹³։ Աղստի հովիտը աչքի է ընկել նաև որպես հողեր ու մշակութային կենտրոն։ Գավառի նշանավոր վանական համալիրները՝ Սորոժորո վանքը (VII դ.), Մակարավանքը (IX-XI դդ.), Առաքելոցը (XII-XIII դդ.), Նոր Գետիկը կամ Գոշավանքը (XII-XIII դդ.), Դեղձնուտը (XIII դ.), Սրվելը (XIII դ.), Կիրանցը (XIII-XIV դդ.) գոջօջախներ և կրթամշակութային

կենտրոններ էին, որտեղ ապրել, ստեղծագործել են Մխիթար Գողշ, Խաչատուր Տարոնացին, Կիրակոս Գանձակեցին։

Գավառի տարածքում պաշտպանական կառույցների առատությունը ապացույցն է այն իրողության, որ դարեր շարունակ երկրամասը պարբերաբար հարձակումների ու ավերածությունների է ենթարկվել ավարառու ցեղերի (արաբներ, մոնղոլներ, սելջուկներ, թուրքեր, լեզգիներ) կողմից։ Բազմաթիվ անգամներ բնակչությունը բռնի կերպով տեղահանվել է, իսկ 1603-1605 թթ. պարսից Շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթը նպատակ ուներ լրիվ հայաթափել երկիրը։ Շահ Աբասի հեռազեն ջաղաքական և տնտեսական ծրագրի իրագործումն ամայացրեց Հայաստանի թե՛ կենտրոնական շրջանները և թե՛ ծայրագավառները¹⁴, այդ թվում նաև Աղստի հովիտը։ Ըստ տեղաբնիկների բանավոր ավանդույթի՝ տեղահանությունից խլույս տված սակավաթիվ տեղացիներ ապաստանեցին լեռների անմատչելի ծերպերում ու անտառներում¹⁵։

Այս իրողությունը հաստատում է նաև Շահ Աբասի պատերազմական պատմիչ Իսկանդար Մունշին. զատ նրա՝ բռնագաղթված բնակչության մի փոքր մասն ազատվել է՝ անառիկ վայրերում թաքնվելով¹⁶։ Աղստի հովիտից տեղահանված ազգաբնակչության խլյակները հասան Պարսկաստան, բայց իրենց հետ տարան իրենց բնակավայրերի մասին հիշողությունը, իսկ բռնագաղթից ճողողաբաժնի փոքրաթիվ հատվածը շարունակեց ապրել իր նախնյաց հողում։ Աղստի հովիտի բնակավայրերի գոյատևման անընդհատության օգտին են խոսում ժողովրդական բանավոր ավանդությամբ և պատմական հիշողությամբ պահպանված պատումները։ Աղստի հովտի՝ միջնադարից (և ավելի վաղ) պահպանված բնակավայրերի ավերակների մոտ հիմնադրված բնակավայրերը ժամանակագրորեն իրարից շատ չեն հեռացած։ Ըստ Մ. Բարխուդարյանի

⁸ *Հովհաննես Դրասխանակերտցի*, Հայոց պատմություն, Ե., 1996, էջ 311։

⁹ *Կիրակոս Գանձակեցի*, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 123, 129, 153, 222, *Ստեփանոս Օրբելյան*, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 284, 319։

¹⁰ *Մաթևոսյան Ռ.*, Տաշիր-Չորագետ, Ե., 1982, էջ 31-32։

¹¹ *Առաքել Դավիթեցի*, Պատմություն, Ե., 1988, էջ 85, 96։

¹² *Ջաջարիա Մարկավազ*, Պատմություն, Վաղարշապատ, 1870, էջ 24, 26։

¹³ Դիվան հայ վիճադրության, Իջևանի շրջան, *Ավագյան Ս., Ջանիդղադյան Դռ.*, VI պրակ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977, էջ 199։

¹⁴ ՀԺՊ, IV հտ., Ե., 1972, էջ 95-105։

¹⁵ ՀԱԲ, հտ. 21, *Խնձնյան Է.*, Մալուշ, հտ. 21, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2000, էջ 5։

¹⁶ ՀԺՊ, IV հտ., Ե., 1972, էջ 100։

հաղորդած տվյալների՝ Աղստիկ հովտի Ուզունթալա, Ուսազու, Խաչթառակ, Ն. Աղդան, Աչաջուր, Մեխգեղ, Մելիքգյուլ, Ջողազ գյուղերի բնակիչների մի մասը բնիկ է, հնուց անտի բնակվել է այդ գյուղերում, երբեմն էլ, պայմաններից ելնելով, փոխել են գյուղի տեղը¹⁷։ Օրինակ՝ նախկին Ուսազու (Դիտավան) գյուղի բնակիչները մեկ հարյուրամյակի ընթացքում երեք անգամ փոխել են իրենց գյուղի տեղը։ Ինչպես հաղորդում է Մ. Բարխուդարյանը, այս գյուղի բնակիչների մի մասը բնիկ է. այդ փաստը ամրագրվում է նաև գյուղի բնակիչների ավագ սերնդի ավանդաբար պատմվող հուշերով։ Գյուղը եղել է Աղստիկ ավաիմ, որտեղ գյուղացիները ափամերձ ճահճուտների պատճառով հիվանդացել են՝ հավանաբար մալարիայով։ Համաճարակից խույս տալու և իրենց առողջությունը պահպանելու նպատակով տեղափոխվել են գետից հեռու գտնվող բլրի վրա, որը կոչվում է Կեղատեղ և գտնվում է ներկա Դիտավան գյուղ բարձրացող ճանապարհի ձախ կողմում, բայց այդտեղ էլ չեն հարմարվել և վերջնականապես բարձրացել ու տեղավորվել են անտառամերձ տարածքում։

Ինչ վերաբերում է Զարվանսարա գյուղին (ներկա Իջևան քաղաքը), ապա, ըստ բանասաց Մարտին Սիմոնյանի հուշապատումի, Զարվանսարայի վերաբնակները եկել են 1780 թվականին։ Պատումը հավաստում է, որ Կոտայքի գյուղերից երեսուն ընտանիք երկար դեգերումներից հետո (Քյաժվաթ Մոլլա, Թիֆլիս և գյուղեր, որոնց անունները չեն հիշատակվում), որը տեղ է երկու տարի, եկել տեսել են «երկու կետի դաթըմը քյարվանի նիտ ա»¹⁸։ Նորեկները համայնել են արդեն գոյություն ունեցող քարավանատան բնակիչների կազմը, այսինքն՝ այն տեսակետը, թե նորեկներն են հիմնադրել Զարվանսարան, հերքվում է հենց եկվորների սերունդների պատումներով, որովհետև Զարվանսարան արդեն կար։ Այն, որպես

տարանցիկ առևտրական, տնտեսական և ստրատեգիական ճանապարհի հանգրվան, հնագույն ժամանակներից եղել է, ու քարավանատան սպասարկու անձնակազմը ապրել է ձուտակա գյուղում և ինչպես բանավոր ավանդությունն է վկայակոչում. «Պարսկաստանի, Տաճկաստանի, Հնդկաստանի մթերքը Ռուսաստան (բանասաց նկատի ունի Կուսիսային երկրները) են ճանապարհով ա էկել-քյնձցել՝ դժվով։ Տենց էլ էտ ա Զյարվանսարա ա ըլել»¹⁹։ Եթե տարածքը անբնակ լիներ, ապա ավարառու մահմեդական ցեղերը այն էլ կբնակեցնեին, ինչպես բնակեցրել էին Աղստիկ վերին հոսանքի և Գետիկի ավաիմերձ գյուղերը։ Ինչ վերաբերվում է «նորեկներին», ապա նրանք Հահ Աբասի բռնագաղթի ժամանակ Պարսկաստան քշված տեղացիների հետնորդներն են, որոնց հավաքական հիշողությունը պահպանել է իրենց պապերի երկրի տեղը։ Պարձալ հենվելով եկվոր տարրի հուշերի վրա՝ կարող ենք ասել, որ Պարսկաստան բռնագաղթվածների վերադարձը եղել է միջնորդավորված. նրանք նախ կայանել են Երևանի գյուղերում (Գյամբեզ, Արզն, Նորը, Գողթ), ապա իրենց նահապետների առաջնորդությամբ, հալածվելով նորանոր ավարառությունների, ժամտախտի ու սովի ալիքից, շարժվել են դեպի Կուսիսա՝ իրենց պապերի «ավետյաց երկիրը» գտնելու և երկար դեգերումներից հետո հանգրվանել են Զարվանսարայում։ Չի բացառվում նաև, որ եկամուտ տարրը իր հետ բերած լիներ Հայաստանի այլ գավառներից բռնագաղթվածների հետնորդներին, բայց դրա համար պետք է առանձին-առանձին քննության առնել եկվոր բոլոր տոհմերի ընտանեկան ավանդագրություններն ու հուշապատումները։

Հետագայում գավառի բնակչության ձևավորմանը նպաստեցին Հայաստանի տարբեր մասերից տարբեր պատճառներով տեղաշարժվող զանգվածները։ Ըստ տարեգրությունների և պատմական տարբեր փաստաթղթերի (օրինակ՝ Ղազար Ջահկեցու կոմսակը)՝ XVIII դարի սկզբին գավառի հայաթափված գյուղերը

¹⁷ Սիմոնյան Ռ., Տավուշի մարզ, Ե., 2003, էջ 224-225:

¹⁸ ՀԱԻԲԱ, FEI: 3515-3516, Բանասաց Մ. Սիմոնյանի կենսագրությունը:

¹⁹ ՀԱԻԲԱ, FEI: 3539, Մ. Սիմոնյան, Իջևանի տեղանունները:

բնակեցված էին նորեկներով (Այրարատ աշխարհից տեղահանվածներ), և կյանքը միառժամանակ ծաղկում էր, մինչև գավառը նորից ենթարկվեց կովկասյան ավարառու ցեղերի (լեզգիներ, չեչեններ) և թուրքական ծագում ունեցող ցեղախմբերի ավերիչ արշավանքներին, ապատարություններին, ավարառությանն ու գերեվարությանը²⁰։ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Ղարաբաղի հաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան մելիքություններից զանգվածային տեղաշարժի արդյունքում ղարաբաղահայերի մի զգալի մասը վերաբնակվեց Աղստևի հովտի բարեբեր բնակիչմայական պայմաններ ունեցող և իրենց նախնի բնակավայրերը ինչեցնող գետահովիտներում, ալպիական գոտու սարերում և անտառածածկ բլուրների վրա²¹։

Վերաբնակեցման այս փաստը 1799թ. ամռանը վավերացվեց ռուսաց Պավել I ցարի հրովարտակով²²։ 1801թ. Հայաստանի հյուսիսարևելյան գավառներն Արևելյան Վրաստանի հետ միասին միացվեցին Ռուսական կայսրությանը, և Աղստևի հովտի բազմաշարժար ազգաբնակչության կյանքը մտավ նոր հունի մեջ։ XIX դարում Ռուսական կայսրությունը մի բանի անգամ վարչատարածքային բաժանումներ է կատարել, որի հետևանքով Աղստևի հովիտը նոր անվանումով, նախ՝ որպես Ղազախի դիստանցիա, մտել է Թիֆլիսի նահանգի մեջ, ապա՝ Ղազախի գավառ անվանումով՝ Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ (1868 թ.)։

Պատմական Չորոփոր գավառը Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը դիտարկել է որպես Սրգախի մի մաս²³, ու թեև պատմաբան Ռ. Մաթևոսյանը գտնում է, որ Բարխուդարյանը սխալմամբ Աղստևի հովիտը վերագրել է Սրգախի պատմաաշխարհագրական շրջանին²⁴, սակայն նմանօրինակ «սխալմուն-

քը» հնարավորություն է տալիս դատելու XIX դարի վերջի Աղստևի հովտի բնակավայրերի, պատմական հուշարձանների, ազգաբնակչության ջանակի, տեղաշարժերի, վերաբնակեցման և բազում այլ հարցերի մասին։ Ըստ Մ. Բարխուդարյանի հաղորդած տեղեկությունների՝ նախկին Ղազախի գավառի՝ մեզ հետաքրքրող բնակավայրերի ազգաբնակչությունը XIX դարի վերջին երկներտ էր։

ա) Գյուլերի մի մասում (Ուզունթալա, Խաչթառակ, Ունազլու, Ներքին Աղղան, Աչաջուր, Սոիգեղ, Մելիքջուղ, Ջողազ (Նոր Պիպիս) դեռևս բնակվում էին Շահ Աբասի կողմից բռնագաղթված արմատական բնակչության փոքրաթիվ հետնորդները։

բ) Գավառի բնակչության երկրորդ շերտը ձևավորվել էր Երևանի Ղըրխ-Բուլաղ, Արզն, Գյամրիս, Նորք, Գողթ, Շամշադինի Կոզն գյուղերից և Ղարաբաղի հաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան մելիքություններից վերաբնակվածներով²⁵։

XIX դ. Աղստևի հովտի բնակավայրերին բնորոշ էին նաև ներքին տեղաշարժերը. Սոի-գյուղից՝ Ունազլու, Ներքին Աղղանից՝ Վերին Աղղան, Աչաջրից՝ Նոր Շարխաչ (Ջարխաչ), Սևբարից՝ Քըրկան, որոնք պայմանավորված էին տնտեսական ու կենցաղային ավելի բարենպաստ պայմաններ որոնելու ակնկալիքով։

1915 թ. Մեծ եղեռնից հետո արևմտահայ գաղթականության մի մասը ապաստանեց նաև Աղստևի հովտի գյուղերում։ Պարբերաբար կրկնվող տարաբնակեցումների ու տեղաշարժերի հետևանքով Աղստևի հովտի բնակչության կազմը դարեր շարունակ փոփոխություններ է կրել։ Խորհրդային տարիներին, տնտեսական վերելքի ու արդյունաբերական ձեռնարկությունների ձևավորմանը զուգընթաց, ակտիվացել են ներքին տեղաշարժերը, որոնց արդյունքում համարվել է նորաստեղծ բանավանների բնակչության կազմը։

Այսպիսով, XIX-XX դդ. բոլոր տարաբնակեցումների ու տեղաշարժերի հետևանքով նախկին Իջևանի շրջանի տարածքում ձևավորվել

²⁰ Սիմոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 177-180։

²¹ Саркисян Г., Население Восточной Армении в XIX – начале XX в., Изд. "Гумитюн" НАН РА, Е., 2002, с. 30-33. Բարխուդարյան Մ., Արցախ, Բաքու, 1895, էջ 339-348, 371-380։

²² ԱՅ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 201։

²³ Բարխուդարյան Մ., նշվ. աշխ.։

²⁴ Մաթևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 8։

²⁵ Բարխուդարյան Մ., նշվ. աշխ., էջ 339-347, 371-377։

է ազգաբնակչության երեք շերտ. ա) տեղաբնիկներ (Շահ Աբասի մեծ բռնազաղորդի մագալուծ արմատական բնակչության փոքրաթիվ հետնորդներ), բ) XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Արցախից և Արարատյան դաշտից վերաբնակվածներ, գ) 1915-20թթ. գաղթած արևմտահայեր:

XX դարում Իջևանի ենթատարածքի բնակչության շերտերը միաձուլվել և ազգագործեն միատարր են դարձել. ձուլվել ու միասնական է դարձել նաև նրանց նյութական ու հոգևոր մշակույթը, որի լավագույն ապացույցը այս ժողովածուն է:

2

Աղստիկ հովտի կամ ճախկին Իջևանի շրջանի գյուղերի բնակչության ինքնատիպ ու հարուստ ժողովրդագիտական նյութերը, ի տարբերություն Հայաստանի մյուս պատմաազգագրական շրջանների, ժամանակին պատշաճ ուշադրության չեն արժանացել:

XIX դարի վերջին երվանդ Լալայանը և նրան օգնող մի շարք մտավորականներ ու բանասիականներ հավաքել են Աղստիկ հովտին հարակից գավառների՝ Բորչալուի և Գանձակի ժողովրդագիտական նյութերը, որոնք հրատարակվել են «Ազգագրական հանդեսի» գրքերում, բայց այս տարածքը ինչ-ինչ պատճառներով դուրս է մնացել ընդհանուր շարժումից: Թեև XIX դարի վերջը նշանավորվել է բանահյուսական-ազգագրական նյութերի հավաքման ու հրատարակման բուռն վերելքով, սակայն Աղստիկ հովտի (Ղազախի գավառ) գյուղերից հավաքվել են չնչին քանակությամբ նյութեր: Գոյություն ունեցող արխիվային և տպագրված նյութերի հիման վրա Իջևանի տարածաշրջանի բանահավաքչության պատմությունը կարելի է բաժանել երեք ժամանակահատվածի.

ա) XIX դարի վերջի բանահավաքներ (Քաջբերունի, Խաչատուր Շահնազարյան, անհայտ բանահավաք),

բ) XX դարի 20-30-ական թվականների բանահավաքներ (Գեղամ Թարվերդյան, Նիկոլ Սարգսյան),

գ) XX դարի 50-90-ական թվականների բանահավաքներ (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրական-բանագիտական խմբարշավներ, Արագ Կարապետյան, Էսթեր Խենջյան և Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողական բանահյուսական խմբարշավ):

Քաջբերունին (Գաբրիել Տեր-Յովհաննիսյան) XIX դարի վերջի այն մտավորականներից է, որն իր անմիջական ծառայողական պարտականություններին (գավառական բժիշկ) զուգընթաց՝ մեծ սիրով ու նվիրումով գրառել է բազմաթիվ ժողովրդագիտական նյութեր՝ Հայաստանի տարբեր գավառներում շրջագայելու ընթացքում: Նա ցանկություն է ունեցել ուսումնասիրել ազգային սովորությունները, ավանդությունները, ծեսերն ու ճախապաշարունները, ըստ որում նրա ուսումնասիրությունները խարսխված են եղել համեմատությունների վրա, որը նրան հնարավորություն է տվել ի հայտ բերելու նույն տոնի, ծեսի, սովորության ընդհանրություններն ու տարբերությունները տարբեր գավառներում²⁶: Ի թիվս Հայաստանի մյուս գավառների՝ Քաջբերունին ժողովրդագիտական արժեքավոր նյութեր է հավաքել իր ծննդավայր Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղում: Հիշյալ նյութերը տպագրվել են «Փորձ» ամսագրում և «Ազգագրական հանդեսում»²⁷. «Հայկական սովորություններ» վերտառությամբ: Քաջբերունու՝ Ուզունթալա գյուղում հավաքած մանկական երգերը, օրորոցայինները, խաղերը, հեքիաթի սկսվածքը, հանելուկները, շուտասելուկները, համբարձման խաղիկները, հարսանեկան ծեսը, ժողովրդական տոները, որոնց զուգահեռ ներկայացվում են նաև մյուս գավառների նմանօրինակ նյութերի տարբերակները, հատուկ են նաև Աղստիկ հովտի մյուս գյուղերին և հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու XIX դարի վերջի Ղազախի գավառի գյուղերում կենցաղավա-

²⁶ Քաջբերունի, Բանապարհորդական նկատողություններ, Ե., 2003, էջ 180, 181:

²⁷ ԱՀ, VII-VIII գրքեր, Թիֆլիս, 1901, էջ 113-204, ԱՀ, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 83-116:

րող ազգային ավանդական ծիսասովորության համակարգի մասին:

Հայ բանավեժնի արժեքները փրկելու և հրատարակելու համար 1882 թվականին («Մշակ» N 4) բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը կոչ է անում հայ ժողովրդին և մտավորականությանը՝ օգնել իրեն՝ հավաքելու բանահյուսական և ազգագրական նյութեր²⁸։ Այդ կոչին արձագանքեցին շատ մտավորականներ, որի արդյունքում Տ. Նավասարդյանը 1883 թվականին սկսեց հրատարակել «Հայ ժողովրդական հեքիաթների» պրակները, իսկ հավաքված նյութերի բնագրերը տեղ գտան նրա արխիվում։ Տ. Նավասարդյանի արխիվային ֆոնդում է պահվում նաև բանահավաք խաչատուր Շահ-նազարյանի հեքիաթների հավաքածուն (թվով ինը հեքիաթ)²⁹, որոնք գրառվել են 1894 թվականին։ Բանահավաքը տեղեկություններ չի հաղորդել ոչ գրառման ստույգ տեղի, ոչ էլ բանասացի մասին, միայն հիշատակված է, որ հեքիաթները Ղազախի գավառից են գրառվել, որի սահմանները համապատասխանում են ներկայիս Տավուշի մարզին։ Ելնելով հեքիաթների լեզվից՝ կարելի է ենթադրել, որ հեքիաթները գրի են առնվել Աղստևի հովտի գյուղերից։ Հեքիաթներն առաջին անգամ տպագրվել են «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի VI հատորում, որում ընդգրկված են Արցախ-Ուտիքի և Գանձակ-Տավուշի պատմաազգագրական շրջանների հեքիաթները³⁰։ Այս նույն ժողովածուում ներկայացվել է ևս մեկ հեքիաթ, որը նույնպես զբտնդվում է Տ. Նավասարդյանի ֆոնդում և գրառվել է 1900 թվականի փետրվարին Քարվանսարա գյուղում։ Հեքիաթը պատմվել է գրական լեզվով, բանասացն ու բանահավաքն անհայտ են։

²⁸ *Խենյան Է.*, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), «Շուշի հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի հոդվածներ, Ե., 2007, էջ 340:

²⁹ ՀՀ ազգային արխիվ, Տ. Նավասարդյանի ֆոնդ:
³⁰ ՀԺԴ, VI հտ., Ե., 1973, էջ 303-350, 514-515, 687-689:

XX դարի 20-30-ական թվականներին Իջևանի ենթատարածքի Ուզունբալա և Աջաջուր գյուղերում բանահավաք Գեղամ Թարվերդյանը գրառել է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ և ժամանակի պահանջով թելադրված կուսակցական առաջնորդներին (Լենին, Ստալին և ուրիշներ) ու կոլտնտեսային առօրյային նվիրված երգեր, որոնք կարճատև կյանք ունեցան և վաղուց դուրս են եկել կենցաղավարումից³¹։ Նման չձևավորված և չկայացած նյութերը նկատի ունենալով՝ Կ. Մելիք-Օհանջանյանը 30-ական թվականներին զգուշացնում էր բանահավաքներին՝ խուսափել ծայրահեղություններից և կոչ էր անում սահմանափակել գրառվող ոչ բանահյուսական նյութերը՝ ասելով. «Նրանցից ոմանք պարզ պատկերացում չունեն ֆուլկլորի սպեցիֆիկումի մասին, անխտիր գրի են առնում այն ամենը, ինչ որ լսել են գյուղացու կամ բանվորի բերանից»³²։

Երկարամյա մանկավարժ, բնագետ, ծագումով շուշեցի Նիկոլ Սարգսյանը 1924-30 թթ.՝ ամառային արձակուրդների օրերին, Իջևանում, Վ. Աղլանում (այժմ՝ Գանձաքար), Դիլիջանում ավանդական բանավեժային բանահյուսության ժանրերից գրառել է առանձնացվածքներ, ամենօրինանքներ ու դարձվածներ³³։

XX դարի 50-ական թվականներից Իջևանի ենթատարածքում ավանդական բանահյուսության հավաքչական գործը թևակոխեց նոր փուլ, որն անմիջականորեն կապված էր ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հիմնադրման (1959) և ակտիվ գործունեության հետ։ 50-60-ական թվականներին ինստիտուտի բանագետների ու ազգագրագետների ամենամյա գիտարշավներն Իջևանի շրջանի տարածքում նպատակ ունեին հավաքել և ուսումնասիրել շրջանի բնակչության միջավայրում կենցաղավարող ազգագրական, բանահյուսական նյութերը։ Այդ գիտարշավներին մասնակցել և մեծա-

³¹ ՀԱԻԲԱ, FFI: 2427-2608:

³² *Մելիք-Օհանջանյան Կ.* Լենինը հայ ֆուլկլորի մեջ, Ե., 1936, էջ 16:

³³ ՀԱԻԲԱ, FFIII: 8662-9999, FFIV: 0001-1210, և Սարգսյանի հավաքածու:

քանակ ժողովրդագիտական նյութեր են հավաքել Արտաշես Նազինյանը, Արագ Կարապետյանը, Վերժինե Սվազյանը³⁴, Դերենիկ Վարդույանը, էծմա Կարապետյանը, Ժենյա Խաչատրյանը և ուրիշներ:

Յետագա տասնամյակների ընթացքում Ադստի հովտի պատմամշակութային, հոգևոր, կենցաղային արժեքներն ուսումնասիրելու համար շրջանի տարածքում կատարվել են հնագիտական պեղումներ, հավաքվել են թանգարանային արժեքներ, գրառվել են բանահյուսական, ազգագրական, բարբառային նյութեր, կատարվել են էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, որոնք նպատակ են ունեցել ամբողջացնել պատմական Չորոփորի հոգևոր ու պատմամշակութային դիմագիծը: Շրջանի տարածքում 70-80-ական թվականներին գործել է մաս Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողական խմբարշավը (ղեկավար՝ Նելլի Ջակոբյան), որի հավաքած նյութերը պահպանված են ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի բանահյուսության արխիվում:

Խմբարշավներից զատ շրջանի տարածքում անհատական բանահավաքչական գործունեություն են ծավալել բանահավաք Արագ Կարապետյանը և տողերիս հեղինակը: Արագ Կարապետյանը եղել է շրջանի բոլոր գյուղերում և հավաքել բազմաժամանակ բանահյուսական նյութեր, որոնք պահվում են Ջնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում³⁵, իսկ գրառած հեքիաթների մի մասը հրատարակել է «Յայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի VI հատորում (1973):

Դեռևս Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներին ժողովրդագիտության նկատմամբ ունեցած նպատակամղումով ու անձնական նախաձեռնությամբ սկսել են հավաքել Իջևանի շրջանի բանահյուսական արժեքները (1970-1972), որոնց հիման վրա գրել և գերազանց պաշտպանել

են «Իջևանի անտիպ բանահյուսությունը» դիպլոմային աշխատանքը (ղեկավար՝ բան. գիտ. թեկնածու Նելլի Ջակոբյան, ընդդիմախոս՝ բան. գիտ. թեկնածու Արտաշես Նազինյան): Անձնական նախաձեռնությամբ սկսված գործը 1972 թվականից դարձել է մասնագիտական կողմնորոշում և գիտական գործունեության ընթացքում շարունակել են հետազոտել և գրառել Իջևանի ենթաշրջանի բնակավայրերի ազգաբնակչության միջավայրում դեռևս պահպանված և կենցաղավարող վիպական, քնարական և բանածնային բանահյուսության բազմաժամանակ ու մեծաքանակ նյութեր, որոնք արխիվավորվել են ըստ բանասիրական գիտությունների դոկտոր Իսիդոր Լևինի կողավորման ու քանակական վերլուծությունների համակարգի և այժմ պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում (FEI: 0001-6700, է. Խեմչյանի ֆոնդ): Նյութերը գրառել են Իջևանի ենթատարածքի տասնյոթ բնակավայրերում, ինչպես մաս Երևան և Թբիլիսի քաղաքներում բնակվող մարմինները իջևանցիներից: Հավաքչական աշխատանքի սկզբնական շրջանում բանահյուսական նյութի անադարտությունը ապահովելու համար աշխատել են հիմնականում նյութերը գրանցել անգրագետ և սեռատարիքային բարձր խմբերի բանասացներից, որպեսզի բացառեն գրավոր ճանապարհով փոխանցման հնարավորությունը: Բանասացների ընտրությունը կատարվել է ոչ միայն բանասացի տարիքային խմբի ու կրթական մակարդակի պատկանելությամբ, այլև բանասացի՝ նյութին տիրապետելու ու վերարտադրելու կարողությամբ: Սովորաբար պարզվում էր, որ շնորհալի ու հմուտ բանասացները, անկախ կրթական մակարդակից, ավանդապահ, ընտանեկան ավանդույթներ ունեցող, մանկությունից իրենց տատի, պապի կամ որևէ համերիստ բանասացի պատումներով սնված ու մեծացած մարդիկ են՝ հակված պահպանելու, վերապատմելու և նոր սերնդին փոխանցելու համար: Ինչ ժառանգել են ավագ սերնդից: Բանասաց Մեսրոպ Շահնազարյանը, որ մի խոսքաշեն ու գրուցատեր ծերունի էր, երբ ի-

³⁴ ՀԱԻՔԱ, FFVII: 8041-8218, Վ. Սվազյանի հավաքածու:

³⁵ ՀԱԻՔԱ, FFIV: 9241-9999, FIV: 0001-0544, FFVI: 7870-8040, FFIX: 9325-9999, Ա. Կարապետյան, Իջևանի բանահյուսություն:

մացավ, թե ինչով եմ հետաքրքրվում և ծայրագրում, հայտարարեց. «Մեր պարտքն էտա, որ մենք ասենք», և ոչ միայն ինքը հրամցրեց իր իմացածները, այլև իր շուրջը հավաքեց այն համագյուղացիներին (Թամար Սահլյան, Լևոն Սահլյան, Մանյակ Շահնազարյան), ովքեր ժողովրդական բառ ու բանի գիտակներ էին, իսկ Թամար Սահլյանն ափսոսանքով ասաց. «Վա՛յ, իմ... մտկերս կորելա, ենքա՛ն ի գիղը՛մ»³⁶:

Իջևանի շրջանում մեր հավաքչական աշխատանքը բաժանվում է երկու փուլի: Առաջին փուլն ընդգրկում է 1970-75թթ. հավաքած նյութերը, որոնց մի մասը գրառվել է ձեռքով (1970, 1971, 1973), մյուս մասը ձայնագրվել է (1972, 1974, 1975): 1976-1986թթ. ինչ-ինչ պատճառներով բանահյուսական նյութի գրառումը Իջևանի տարածաշրջանում դադարեցվել է, և սկիզբ է դրվել ու տաս տարի շարունակվել ռախկին Շամշադինի շրջանի բանահյուսական արժեքների հավաքումն ու հետազոտությունը³⁷: Այդ տաս տարիների ընթացքում Իջևանի բանահյուսության հավաքումը կրել է դիպվածային բնույթ: 1985 թվականին հավաքչական աշխատանքը Իջևանում վերսկսվել է և շարունակվել մինչև մեր օրերը: Պարտադրված ընդմիջումը բացասաբար է ազդել ավանդական ժողովրդագիտական նյութերի հավաքման վրա, որովհետև նախ կյանքից հեռացել էր այն սերունդը, որը դեռևս հիշում և պատմում էր թե՛ բանահյուսական և թե՛ ծիսահավատալիքային, տնտեսական ու կենցաղային բազմաթիվ իրողություններ և երկրորդ՝ ժամանակի ընթացքում նոր հարաբերությունների, կենցաղի, տնտեսական վերելքի, կրոնահավատալիքային դաշտի խաթարման պայմաններում շատ բաներ իրենց տեղը գիցեցին նոր երևույթներին, և կենցաղավարումից դուրս մղվեց ժողովրդագիտական այն նյութը, որն այսօր մեզ այնքան հետաքրքրում է: Բանահավաքչության վերջին փուլում արդեն մեծ քանքներ էին պահանջվում հատիկ առ հատիկ հավաքելու այն փշրամքները, որ դեռևս հնարավոր էր

հավաքել, այդ իսկ պատճառով վերջին քսան տարվա ընթացքում նյութերի մի զգալի մասը պատահիկների տեսք ունեն, որովհետև գրառվել է այն, ինչ բանասացը դուրս է կորզել իր հիշողության խորքերից:

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի տեղաշարժերի ու վերաբնակեցումների ընթացքում տեղաբնիկների, արցախյան ու արարատյան, նաև պարսկահայ շերտերի միախառնումով ձևավորվեց Իջևանի ենթաշրջանի բնակչության կազմը, որին XX դարի սկզբին հավելվեց արևմտահայ հատվածի գաղթականությունը: Այս խմբերից յուրաքանչյուրն իր ավանդական նիստակացի, բառ ու բանի, սովորույթների ու հավատալիքների կրողն էր, որը բերեց ու ներմուծեց ընդհանուրի մեջ: Համատեղ կյանքը, տարբեր շերտերի խառն ամուսնությունները, ընդհանուր ձգտումներն ու նպատակները մերժեցրին ու միասնական դարձրին Աղստիկ հովտի բնակչության հոգևոր ու նյութական մշակույթը: Իջևանի ենթաշրջանի բոլոր գյուղերում, որտեղ նյութ ենք հավաքել, առկա են միախառնման դրսևորումները. գրեթե բոլորը հիշում են, թե իրենց տոհմը մայրական կամ հայրական կողմից, որտեղից է եկել և ինչպես է տեղաշարժվել (հիարեկ, հիշողությունները սահմանափակվում են վերջին 200 տարվա դեպքերով և իրողություններով):

Ավանդական բանահյուսական նյութի որոնման ընթացքում հանդիպել և աշխատել ենք 139 բանասացի հետ, որից 61-ը տղամարդ են և 78-ը՝ կին: Բանասացների կրթական մակարդակը խիստ բազմազան էր. ավագ սերնդի բանասացներից 29-ը անգրագետ էր (9 տղամարդ, 20 կին), 66 բանասաց գրամանաչության տարբեր աստիճանների վրա էր կանգնած (տառաճանաչություն, տարրական կրթություն, լիկկայանում սովորած գրագիտություն, ծխական դպրոցի կրթություն և այլն), 11-ը՝ բարձրագույն կրթությամբ (ուսուցիչ, ինժեներ, անասնաբույժ, բժիշկ), 9-ը՝ միջնակարգ, 3-ը՝ միջնակարգ-մասնագիտական, 8-ը՝ յոթամյա և ութամյա կրթությամբ բանասացներ: Տասնմեկ բանասացի կրթական մակարդակը նշված չէ, բայց բանասացները ավագ

³⁶ ՀԱԻԲՎ, FEII: 2199-2200:

³⁷ ՀԱԲ, նշվ. աշխ., Ե., 2000, էջ 7:

սեռատարիքային խմբի ներկայացուցիչներ են (1898, 1900, 1912 թթ. ծնվածներ), ովքեր լավագույն դեպքում միայն տառաճաճաց կարող էին լինել³⁸:

Գիտակ ու շնորհալի բանասացների հետ աշխատել են մի քանի տարի (Ա. Առուստամյան - Այգեհովիտ, Ն. Յովհաննիսյան - Սևքար, Մ. Շահնագարյան - Սարիգյուղ, Յ. Խեմչյան, Ե. Սիմոնյան - Դիտավան, Մ. Սիմոնյան - Իջևան, Ա. Ջիլաբյան, Ա. Խաչատրյան - Գետահովիտ և ուրիշներ):

Բանահավաքչական երկու փուլի ընթացքում գրառվել է 2625 միավոր նյութ (այս թվի մեջ չեն մտնում դեռևս չվերծանված նյութեր): Գրառված նյութերի մեջ գերակշռում են հեքիաթները (հրաշապատում, իրապատում և կենդանական), զրույցները, առած-ասացվածքները, դարձվածները, զվարճախոսությունները, խաղիկները, հանելուկները: Բանահյուսական մյուս ժանրերը (եղգերի որոշ տեսակներ, աղոթքներ, ստեր, շուտասելուկներ, սպառնալիքներ և այլն) քանակապես քիչ են, բայց կարևորության տեսակետից՝ շատ արժեքավոր: Հավաքչական աշխատանքի ընթացքում այս կամ այն ժամանկ նախապատվություն չի տրվել, գրառվել է այն ամենը, ինչ հնարավոր է եղել. պարզապես բանահյուսական այնպիսի ժանրեր, ինչպիսիք են՝ առած-ասացվածք-

ները, դարձվածները, անծեքները և մյուս բանավածները, որոնք համոզեց են զալիս բանավոր խոսքի մեջ՝ ըստ տեղի, պահանջի ու անհրաժեշտության, դժվար են գրառվում, և էլ մի թեկուզ տաղանդավոր ու փորձառու բանասաց բանահավաքի առաջարկով չի կարող պահի տակ մատուցել ասույթաբանական նյութ, մինչդեռ վիպական բանահյուսության ժանրերը, որոնք իրենց թե՛ ծավալով և թե՛ բանասացի կողմից հիշելու մատչելիությամբ ավելի հեշտ են վերարտադրվում և գրառվում: Յուրաքանչյուր բանասաց ունի իր նախընտրած բանահյուսական տեսակը և իր երկացանկը, ուստի այդ սահմաններից դուրս չի գալիս: Օրինակ՝ Ավետիք Ջիլաբյանի (Գետահովիտ) երկացանկը կազմված էր հեքիաթներից, որոնց մի զգալի մասը սովորել էր իր վարպետից՝ վանեցի Խաչո Բիծայից, բանասաց Գուրգեն Գրիգորյանինը (Դիտավան)՝ իրապատում հեքիաթներից և զրույցներից, որոնք իրենց բնույթով ուսուցողական ու խրատաբանական են, բանասաց Երանուհի Սիմոնյանի (Դիտավան) բանավոր խոսքը հազեցած էր առած-ասացվածքներով, դարձվածներով ու բարենաղթություններով, Սուրեն Հախվերդյանը (Դիտավան) տեղական զվարճախոսների զվարճախոսությունների վարպետ վերարտադրող էր, Մեսրոպ Շահնագարյանը (Սարիգյուղ) նախընտրում էր կենդանական հեքիաթները: Վարպետ բանասացներ Ալբեկ Առուստամյանի, Թագուհի Համզյանի (Այգեհովիտ), Նշան Հովհաննիսյանի (Սևքար), Դազար Թեմուրյանի (Ծաղկավան), Հայկ Խեմչյանի (Դիտավան), Արամայիս Հակոբջանյանի (Խաչքառակ), Սուլթան Մայիլյանի (Բերքաբեր), Մարտին Սիմոնյանի (Իջևան), Արշակ Օհանյանի (Ենդրավան) բանահյուսական երկացանկերը բաղկացած էին ավանդական բազմաբնույթ ու բազմաժանր նյութերից, որոնց միջոցով պատկերացում ենք կազմում, թե Իջևանի ենթատարածքում ինչպես է դասավորվել բանահյուսական ավանդույթի ճակատագիրը, բանահյուսական որ ժանրերն են բնորոշ այս տարածաշրջանի բնակիչներին, և վերջին երկու հարյուրամյակի ընթացքում ինչ բնույթի նյութեր են պահպանվել ժողովրդի

³⁸ Բանասացների կրթական մակարդակի բազմազանությունը պայմանավորված էր նրանց սոցիալական ու կենցաղային պայմաններով, հատկապես ծանր էր կանանց վիճակը: Ավագ սերնդի կանանց մեծ մասը մատնանշում էր այն հանգամանքը, որ արջիկը սովորում իրավունք չուներ՝ «Ախճիկ՝ ի՞նչ, դպրոցն՝ ի՞նչ» (ՀԱԻՔԱ, FEI: 4715, Մ. Մայիլյան, Բերքաբեր), կնոջ դերը ընտանիքի հոգսերը հոգալն էր՝ մանել, գործել, կարել, քն ու քիկները լինել տղամարդուն: Բանասաց Շահնագարյանը, բնորոշելով կին արարածին, նրան համեմատում է հողի հետ՝ «հողիցն ամոշ կընկի», որով հետևելով «Աշխարի շնչավորին հողն ա պահըն» (ՀԱԻՔԱ, FEI: 3235, Մ. Շահնագարյան, Սարիգյուղ): Այսինքն՝ գյուղաշխարհում կնոջ դերը բարձր էր գնահատվում որպես ընտանիքի մայր, տնտեսություն վարող և տղամարդուն գորավիզ կանգնող, սակայն նախապետական սահմանափակ միջավայրը հաճախ մերժում էր կնոջ կրթությունը՝ որպես ավելորդ շեղություն: Այս մտայնությունն ու վերաբերմունքը նոր կարգերի հաստատման հետ փոխվել էր, և կինը դարձել էր հասարակության գրեթե լիիրավ անդամ [19(124)]:

հիշողության ընդերքում, որն էլ փորձ է արվել որոնել, գտնել, գրառել և նորից հանձնել ժողովրդին: Բանահյուսական նյութին զուգահեռ՝ գրառվել են նաև այս արտածաշրջանին բնորոշ և ժողովրդագիտական կարևոր արժեք ներկայացնող տոներ (Վարդավառ, Ջատիկ, Սուրբ Սարգիս, Համբարձում), ծեսեր (անձրևառաջացման, անձրևախափան, կարկտախափան), հավատալիքներ, սովորույթներ ու նախանշաններ, գուշակություններ, ժողովրդական բժշկություն ու խոհանոց, որոնք, լինելով հայոց հնագույն տոնածխական համակարգի վերապրուկները, դեռևս մասնակի կերպով կենցաղավարում են շրջանի գյուղերում, իսկ վերջին շրջանում, անցյալի արժեքները ճանաչելու և պահպանելու միտումով, դիտվում է վերընձուլման ու ակտիվացման երևույթ, ինչպես օրինակ, գատկական ու վարդավառյան տոնախմբությունները:

Գրառվել է նաև Իջևանի, Դիտավանի, Աչաջրի, Սեքարի, Ենքավանի սարերի ու հանդամասերի տեղանունները և նրանց հետ կապված ավանդաբար վիպավոր պատմությունները: Օրինակ, Ուսազու գյուղանվան մասին գյուղացիներն ավանդաբար պատմում էին, որ գյուղը Ուսազ թյուխայի անունով է կոչվել, սակայն բանասաց Հայկ խեմչյանը, որը նաև հնուտ լեզվաբան էր, ստուգաբանում էր այլ կերպ. Ուսազու գյուղից վերև գտնվում է մի հսկա քարածառ, որը կոչվում է Համզա կամ ճաշաքար³⁹, որը սովորում է գյուղը և զրկում արևից: Ըստ Հ. խեմչյանի՝ գյուղի անվանումը *արևազուրկ* բառից է, որն Իջևանի խոսվածքում արտասանվում է *ըրևազուրկ* < *ըրևազուրկ* (արևազուրկ < ըրևազուրկ), այդ ձևին հաղելվել է *լու* բուրբական վերջածանցը, որը տեղավայր է մատնանշում: ճաշաքարը (բարբառային արտասանությամբ՝ ճըշաքար) նույնպես հաստատում է այս տեսակետը, որովհետև արևը գյուղի վրա ընկնում է կեսօրից հետո (ճաշից հետո), որով էլ պայմանավորված է քարի անվանումը: Այս քարը մի քանի անվանում ունի՝ Սեծ քար, Համզի քար, Սալդախի քար, ճըշաքար կամ Զեշաքար

(այդպես անվանում են աչաջրեցիները)⁴⁰, ճգնավորի քար: Քարը վեր է խոյանում անտառի մեջ և ներքևից մայելիս երևում է, որ հսկա ժայռի ներսում խոռոչ կամ քարայր կա, որը արտաքինից պատված է քարուկիր պատով և անմատչելի բերդ է ներկայացնում⁴¹: Ըստ ժողովրդական բանավոր պատմության՝ հարձակումների, գերեվարությունների ու ավարառությունների ժամանակ մարդիկ պատսպարվել են այդ անմատչելի վայրում: Գյուղացիները պնդում են, որ այնտեղ բուն դրած արծիվները երբեմն քարայրից գործվածքի կտորներ են դուրս բերում⁴²: Քարայրը հետազոտված չէ:

Բանասացները ծագումով հիմնականում Իջևանի շրջանի գյուղերից են, կան նաև Նոյեմբերյանի (Ոսկեպար, Շավարշավան), Շամշադինի (Վարազավան) գյուղերից և Թիֆլիս քաղաքից տեղափոխվածներ, մեկ հոգի Նախիջևանի Մազրա գյուղից (Իվան Ներսիսյան) և չորս բանասաց (Հարություն Հարությունյան, Շամառ Շահբազյան՝ Վան, Նշան Հովհաննիսյան՝ Բիթլիս, Խարխոց, Ազիզ Մուրադյան՝ Մոկաց Հաղին գյուղ) ցեղասպանությունից հետո Սրևնայան Հայաստանից գաղթածներ: Գրառված բոլոր նյութերում, անկասկածաբար մեկը (ձայնագրություն, ծեռքով), անադարտ պահպանվել են բանասացի կողմից արտաբերված բարբառային ու արտասանական բոլոր դրսևորումները:

3

Իջևանի ենթատարածքի գյուղերից գրառված բանահյուսական 2625 միավորից խիստ ընտրությամբ ժողովածուում ընդգրկվել է

³⁹ ՀԱԻՐԱ, FEI: 5801, բանասաց՝ Գուրգեն Գրիգորյան:

⁴¹ *Քարխուդարյան Մ.*, նշվ. աշխ., էջ 359:

⁴² Քարի գլուխը հարթ տափարակ է ու բացառա՞ շրջապատված դարավոր անտառով: Այս վայրը գյուղացիների համար տոնախմբություններ անցկացնելու վայր է: Քարի գլխից, ինչպես ափի մեջ, երևում են ողջ Աղստև և Քուռ գետերի հովիտները՝ մինչև Թիֆլիսի քաղաքը: Այս հանգամանքն էլ հիմք է ծառայել, որ գյուղը վերանվանվի Դիտավան: Քարի հետևում են գտնվում Դիտավան գյուղի «Խաբունա դղիքի» և «Ուլամա ծիր» կոչվող հանրահատերը (ծանր. կազմողի):

³⁹ *Քարխուդարյան Մ.*, նշվ. աշխ., էջ 359:

1322 միավոր նյութ, որը ներկայացնում է ավանդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերը:

Ժողովածուում բանահյուսական բնագրերը ամփոփված են չորս բաժիններում՝ վիպական, քնարական, բանաձևային բանահյուսություն և ժողովրդական տոներ, ծեսեր, հավատալիքներ: Ժողովածուում ընդգրկվել են վիպական ու քնարական բանահյուսության առավել ամբողջական ու անխաթար տարբերակները: Հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթներն արխիվային հավաքածուում առկա են մի քանի տարբերակներով, երբեմն հեքիաթային նույն սյուժեին գրեթե բոլոր գյուղերում պատմվում էր. օրինակ՝ «Ի՞նչ եմ ըլել, ի՞նչ դեմ ըլիլ»⁴³, «Պառավ կելն ու Դիլիբոզուն»⁴⁴, «Արջն ու աղվեսը»⁴⁵, «Հերբը»⁴⁶, «Ըռավուտը» մինըտ, ըրիւզունը՝ մինըտ»⁴⁷, «Թաքավորի թամբալ ախճիկը»⁴⁸, «Պետը ա աշխատես, որ ապրես»⁴⁹, «Ով ըշխատի՝ նա ուտի»⁵⁰, «Պըրկը-փոխան կնիկը»⁵¹, «Պըրկըփոխանը»⁵²: Բնականաբար մեծան հեքիաթներում ժողովածուում դրվել է ամենակատարյալ պատումը: Գրառված հեքիաթների, սիրավեպերի, հրաշապատումների, գրույցների մի զգալի մասը ժողովածուում չի ընդգրկվել. օրինակ՝ «Թաքա-

վորի պումուր տղեն»⁵³, «Նովուր»⁵⁴, «Դթումի հեքիաթը»⁵⁵, «Ճակատագրի հեքիաթը»⁵⁶, «Շահի Իսմայիլ»⁵⁷, «Հագարանմինընը բըլ-բուլը»⁵⁸, «Երազ համողը ու օձը»⁵⁹, «Թաղիք թցող թաքավորի տղեն»⁶⁰, «Էրազի եղևից քյննցողը»⁶¹ և այլն:

Իջևանի ժողովրդական հեքիաթներն իրենց բնույթով, սյուժեներով ու թեմաներով խիստ բազմազան են: Իջևանյան հեքիաթասացների պատումներում առկա են հայկական և համաշխարհային հեքիաթների հիմնական տեսակներն ու տիպերը, որոնք արտացոլված են ծանոթագրությունների աղյուսակում: Հրաշապատում հեքիաթների առավել տիպական տարածված սյուժեներն ու մոտիվներն են.

ա) խորթ մայրը կեղծ հիվանդ է ձևանում և թագավորագին ուղարկում ամնախական ջուր բերելու, որը իմաստուն ծերունու խորհրդով և արծվի օգնությամբ հաղթահարում է բոլոր արգելքները և բերում պահանջվածը [1(1)]:

բ) Թագավորի 40 որդիները գնում են 40 քույրերի փնտրելու, որ ամուսնանան: 40 քույրերին գտնելուց հետո հանդիպում են Դոճի Փոլաթին (Ամջան դևին), որի պահանջով կրտսեր թագավորագնը կատարում է դևի անհնարին առաջադրանքը [4(4), 5(5)]:

գ) Թագավորի իսկական սանիկից արաբը հափշտակում է թագավորական նշանը, որով թագավորը պետք է նրան ծանաչի: Կեղծ սանիկը թագավորի կողմից ընդունվում է որպես

⁴³ ՀԱԻՐԱ FEI: 2301-2321, Լ. Սառիկյան, Սարիգյուլ, ՀԱԻՐԱ FEI: 3267-3280, Ա. Շահնագարյան, Սարիգյուլ:

⁴⁴ ՀԱԻՐԱ FEI: 2323-2329, Լ. Սառիկյան, Սարիգյուլ, ՀԱԻՐԱ FEI: 3261-3264, Ա. Շահնագարյան, Սարիգյուլ:

⁴⁵ ՀԱԻՐԱ FEI: 2333-2337, Լ. Սառիկյան, Սարիգյուլ, ՀԱԻՐԱ FEI: 3265-267, Ա. Շահնագարյան, Սարիգյուլ:

⁴⁶ ՀԱԻՐԱ FEI: 2329-2332, Լ. Սառիկյան, Սարիգյուլ:

⁴⁷ ՀԱԻՐԱ FEI: 5717-5719, Գ. Գրիգորյան, Ղիտավան:

⁴⁸ ՀԱԻՐԱ FEI: 1455-1472, Ն. Հովհաննիսյան, Սևքար:

⁴⁹ ՀԱԻՐԱ FEI: 5719-5727, Գ. Գրիգորյան, Ղիտավան:

⁵⁰ ՀԱԻՐԱ FEI: 4803-4818, Ա. Վելումյան, Բերքաբեր:

⁵¹ ՀԱԻՐԱ FEI: 0209-0232, Ա. Առուստամյան, Այգեհովիտ:

⁵² ՀԱԻՐԱ FEI: 4787-4797, Խ. Գասպարյան, Բերքաբեր:

⁵³ ՀԱԻՐԱ FEI: 0599-0610, Հ., Չաբուխյան, Գետահովիտ, 1972:

⁵⁴ ՀԱԻՐԱ FEI: 0765-0772, Ա. Խաչատրյան, Գետահովիտ, 1972:

⁵⁵ ՀԱԻՐԱ FEI: 1215-1240, Ա. Սարգսյան, Լուսաձոր, 1972:

⁵⁶ ՀԱԻՐԱ FEI: 1289-1293, Ա. Մելիքսեթյան, Իջևան, 1972:

⁵⁷ ՀԱԻՐԱ FEI: 3901-3970, Ի. Ներսիսյան, Ղիտավան, 1975:

⁵⁸ ՀԱԻՐԱ FEI: 4115-4166, Ա. Համգյան, Այգեհովիտ, 1975:

⁵⁹ ՀԱԻՐԱ FEI: 3979-3994, Ա. Հակոբջանյան, Խաչքառակ, 1975:

⁶⁰ ՀԱԻՐԱ FEI: 5063-5067, Ա. Օհանյան, Ենոքավան, 1987:

⁶¹ ՀԱԻՐԱ FEI: 5493-5510, Ա. Սիմոնյան, Սևքար, 1988:

թագավորազն: Կեղծ թագավորազնը ստիպում է թագավորին՝ իսկական սանկիին ուղարկել գեղեցկուհի հարսնացուի հետևից, որին ձեռք բերելու համար պետք է դժվարագույն պայմաններ հաղթահարի, որոնք չկատարելու դեպքում կկործանվի: Չերոսը բարի ուժերի ու կենդանիների օգնությամբ առաջադրանքը կատարում է [6(6)]:

դ) Պառավ կնոջ անձեքի համաձայն՝ արքայազնը սիրահարվում է հայր բլբուլի աղջկան: Նա յոթ գլխանի դկի խորհրդով ձեռք է բերում մի վարունգ, որի մեջ աղջիկն է: Վերադարձի ճանապարհին աղջկան փոխարինում է թուրքի պառավը, որն ամեն կերպ փորձում է ոչնչացնել հակառակորդ աղջկան: Վարունգից դուրս եկած աղջիկը անցնում է փորձությունների միջով և վերականգնում իր իրավունքները [8(8)]:

ե) Մեռնող թագավորը որդիներին պատվիրում է իր աղջիկներին ամուսնացնել առաջին խնամախոսի հետ: Կրտսեր որդին պահում է հորը տված խոստումը և քույրերին ամուսնացնում գայլի, աքցի և Սմուռ դուշի հետ: Չետո կենդանիներն օգնում են արքայազնին վերադարձնել իր կնոջը, որին հափշտակել էր դևը [13(13)]:

զ) Օձն իր փոխարեն նախընտրում է ուղարկում արքայադստեր ձեռքը խնդրելու: Արքայի պահանջները կատարելուց հետո աղջկան տալիս են նախընտրում: Օձը կերպարանափոխվում է և ապրում կնոջ հետ այնքան ժամանակ, քանի դեռ գաղտնիքը չի բացահայտվել: Գաղտնիքի բացահայտումից հետո օձը հեռանում է, արքայադուստրը հաղթահարում է այն արգելքները, որից հետո պետք է վերադարձնի ամուսնուն [17(17)]:

է) Մարդակերն անզավակ ծերունիներին որդիներ է պարգևում, պայմանով, որ ավագին պետք է տանի: Չիու խորհրդով տղան հաղթահարում է բազում դժվարություններ և ազատվում մարդակերից: Ապա հայտնվում է ստորերկրյա աշխարհում և այնտեղից դուրս գալիս արծվի օգնությամբ [21(21)]:

ը) Աղքատ պառավի այծը կերակրում է ընկեցիկ երեխային, որին պառավը պահում մեծացնում է: Տղան շուկայում գնում է մի

արկղ, որի մեջ թաքնված գեղեցկուհին դառնում է նրա կինը: Տղան գնում է հեռավոր երկրներ՝ աշխատելու և ընկերոջ ամբաստանության պատճառով սպանում է անմեղ կնոջը: Վաճառականը փրկում է կնոջը, որ հետո դառնում է թագավոր և պատժում մեղավորներին (ՀԱԻԲԱ FEII: 3833-3845, ժողովածուում չի ընդգրկվել):

թ) Կրտսեր թագավորազնը օգնում է մի ծերունու, որը նրան սովորեցնում է, թե ինչպես Քոսոտ թագավորի մոտից, որը կին է, հետ բերի իր հոր հազարան հավքը: Տղան բերում է հազարան հավքը, բայց եղբայրները չարամտորեն նրան գցում են ջրիորը, որտեղից ազատվելուց հետո նա օգնում է հորը՝ իր և հազարան հավքի հետևից եկած Քոսոտ թագավորի պատասխանը տալ: Քոսոտ թագավորը նրան ուղարկում է Սատանաների թագավորի գաղտնիքը իմանալու (ՀԱԻԲԱ FEII: 4395-4444, հեքիաթը թեև շատ երկարաշունչ է, բայց ժողովածուում չի ընդգրկվել՝ պատումի կտրտվածության պատճառով):

ժ) Ամբաստանված աղջկա ձեռքերը կտրում են և բաց թողնում անտառում: Թռչունի խորհրդով աղջիկը ետ է ստանում իր ձեռքերը և ամուսնանում թագավորի որդու հետ: Աղջիկը երկրորդ անգամ է ամբաստանվում. նրան նորածին երեխաների հետ նետում են ծովը: Չկան խորհրդով ձեռք է բերում կախարդական մոմակալ, հարստանում և ապացուցում իր անմեղությունը [32(32)]:

ի) Թագավորի աղջիկը ամուսնանում է պառավի ծուլ ու ապաշնորհ տղայի հետ: Կնոջ պնդումով ծուլ ամուսինը միանում է քարավանին, գնում օտար երկրներ: Ճանապարհին ջրիորից ջուր հանելիս միշտ պահվածքի համար վատակում է անգին քարերով նուռ, որն ուղարկում է կնոջը, և հարստանում են [19(19)]:

Իջևանյան իրապատում հեքիաթների ամենատարածված սյուժեներն ու մոտիվներն են.

ա) Աղջիկը իղանում է ուլունքից և ունենում մի ճարպիկ ու իմաստուն որդի, որը թագավորական գանձարանը թալանում ու ճարպկորեն խույս է տալիս բռնվելուց: Դարևան երկրի թագավորը ծաղրում է թալանված թագավորին: ճարպիկ տղան գողանում է հա-

րևան երկրի թագավորին և արժանանում մեծարանքի [40(40), 41(41), 76(76)]:

բ) Աշխատասեր գյուղացի տղան թագավորի ծուլ աղջկան սովորեցնում է աշխատել, որովհետև ով չաշխատի, նա չի ուտի [45(45), 46(46), 80(80)]:

գ) Ժլատ հարուստը ծառա է վարձում՝ մինչև զարնան կկվի կանչելը, պայմանով, որ ով զայրանա, նրա մեջքից մի զուկ կաշի հանեն: Գարպիկ ծառան կարողանում է համբերությունից հանել ու զայրացնել տիրոջը և ըստ պայմանի՝ մի զուկ կաշի հանում մեջքից [47(47), 48(48)]:

դ) Ամուսինն անզգամ կնոջը հորն է գցում և այնտեղից հանում ասիաբեկված օձին, որի օգնությամբ հարստության տեր է դառնում [50(50), 51(51)]:

ե) Աստված էշ է դարձնում այն մարդուն, ով իր աչքի առաջ կատարվածը չի հասկանում, բայց փորձում է գուշակել այն, ինչ աստծո իրավասության տակ է [53(53), 67(67)]:

զ) Մի երիտասարդ, խախտելով թագավորական հրամանը, բաժնցնում է իր ծեր հորը, որը հետո իր իմաստությամբ օգնում է թագավորին դուրս գալ դժվարին իրավիճակից [64(64), 65(65), 66(66)]:

է) Թագավորը գլխին եղջյուր ունի և, գաղտնիքը պահպանելու նպատակով, սպանել է տալիս վարսավիրին: Վերջին վարսավիրը գաղտնիքը ասում է հորի մեջ, որտեղից դուրս եկած եղեգը բացահայտում է գաղտնիքը [71(71), 86(86)]:

ը) Մի ծեր մարդ հողի երեք կույտ է արել, որ նախատեսված է անզաղտնապահ կնոջ, նոր հարստացած մարդու և եղբայրացուի համար՝ որպես անվտանգելի մարդկանց: Մի երիտասարդ որոշում է փորձել ծերունու խոսքի իսկությունը [57(57), 82(82)]:

Իջևանի հրաշապատում հեքիաթներն իրենց կառուցվածքով նման են Հայաստանի ցանկացած պատմաագագրական տարածքի հեքիաթներին: Բոլոր հեքիաթների նման գործողությունը ծավալվում է որևէ թագավորությունում, գյուղում, քաղաքում, անտառում, ջրաղացում, «չայրի-չիման» տեղ, մի հեքիաթային աշխարհում (անվտանգ-վտանգ աշխարհ

[5(5)]), որին տանող ճանապարհը լի է բազում արգելքներով ու վտանգներով: Սովորաբար հեքիաթների գլխավոր հերոսներն են թագավորի որդիները (մինուճար, երեք որդի, 40 որդի), մինուճար արքայաղուստը, ոսկեմագ աղջիկն ու տղան, երեք աղջիկն ու երեք տղան, աղքատ պառավի տղան (հորթարած, փայտավաճառ, մինուճար որդին, երեք որդին, որոնցից գլխավորը կրտսերն է՝ քաջալը): Հաճախ անզավակ ամուսինները հրաշագործ ճանապարհով զավակ են ունենում: Հեքիաթի սյուժեն կառուցվում է գլխավոր հերոսի շուրջը, որը հեռանում է տնից՝ որոշակի խնդիր լուծելու համար, նրա գործողությունները սերտորեն կապվում են առասպելաբանական մոտիվների հետ, այն է՝ քառասուն աղջիկների հետևից մետաղապատ հորը իջնելը, բացվող ժայռի մեջ մտնելը և այնտեղից անմահական խնձոր ու ջուր բերելը, ծովի խորքից հավերժահարս բերելը, հետ նայելու դեպքում քար դառնալը, ինչ-որ իրի հետևից մեռյալների աշխարհը (էն դունյեն) գնալ-վերադառնալը: Հերոսն իր առջև դրված խնդիրները լուծում և հակառակորդներին ոչնչացնում է հեքիաթային հրաշագործ ուժերի և խորհրդատուների օգնությամբ: Հրաշապատում հեքիաթները բազմաշերտ ստեղծագործություններ են, և երբեմն հեքիաթի մեջ մղտնում են առանձին անկախ սյուժեներ, որոնք լրացնում ու բացահայտում են հերոսների վարքագծի դրսևորումները («Պճի հեքիաթը» [3(3)]), երբեմն էլ հեքիաթի սյուժեի մեջ կարող է մտնել աստվածաշնչյան մոտիվ, ինչպես օրինակ՝ «Թաքավորի բախտը» հեքիաթի սկզբամասը, որը հիշեցնում է Ղովտի մասին աստվածաշնչյան սյուժեն⁶²:

Իջևանի հեքիաթներին նույնպես հատուկ են կայուն բանաձևերը, սկսվածքներն ու հեքիաթային ավարտը: Մեծ մասամբ հրաշապատում հեքիաթներն սկսվում են «Ըլըմ ա, ըլըմ չի [1(1), 23(23), 25(25)], «Մի թաքավոր ա ըլըմ հարևմուտքի երկրում» [2(2)], «Ըլել ա, ըլել չի՝ մի հատ թաքավոր» [3(3)], «Եղել ա, եղել չի, մի թաքավոր ա ըլել» [74(74)], «Լի-

⁶² Աստվածաշունչ, Բեյրութ, 1985, Գիրք Ծննդոց 19, 20:

նում ա, չի լինում» [4(4)], «Մի թաքավոր իրեք տղա ունի» [15(15), 18(18)], «Մի քաղաքը մի խսանաթ հըրամի ա պահիմ կալի» [20(20)], «Եղել ա, ուրեմը, մի ընտանիք» [22(22)], «Ըլել ա, չըլել» [32(32), 59(59)], «Մի մարթ, մի կնիկ են ըլըմ» [38(38)], «Ըլմ ա, լըմ չի՝ մի մարթ, մի կնիկ» [50(50)] սկսվածքներով: Սկսվածքի առաջին մասը հաստատում, իսկ երկրորդ մասը ժխտում է պատումի իրական լինելու հանգամանքը: Նմանօրինակ բանաձևումը հենց սկզբից ունկնդրի մոտ ստեղծում է դեպքերի անիրական, անհավանական լինելու պատրանքը և ո՛չ բանասացը, ո՛չ էլ ունկնդիրը չեն հավատում դեպքերի հավաստությանը, ու շատ հաճախ բանասացները դա ձևակերպում են. «հեքիաթ ա էլի», այսինքն՝ ճշմարտապատում չէ:

Ի տարբերություն հրաշապատում հեքիաթների՝ իրապատում հեքիաթների սկսվածքն իր մեջ ժխտում չի պարունակում, այն հաստատում է մի իրողություն, որը ենթադրվում է, որ ինչ-որ տեղ գոյություն ունի կամ եղել է. «Մի մարթու կին սիրեկան ունի» [42(42)], «Մի տիտտեր ա ըլում» [48(48)], «Երկու ախպեր էլ, ախչիկ ջան, քյասիթ են ինձ դայդի» [49(49)], «Ըլետ իմ օրքը մի խեղճ մարթի մի կնիկ ա պտահըմ, բայց շատ բարըշմա՞զ ա ըլըմ» [51(51)], «Երկու շատ մոտիկ ընկերներ միշտ ֆորսի են քյըմ» [53(53)], «Մի ճղազպան տուս ա կյալի տենըմ» [54(54)], «Մի մարթ ճամփեն մի անց կենալիս ա ըլըմ» [56(56)], «Ուրեմը, եղել ա մի մարթ, որ երկու տարի չի պսակվել» [60(60)], «Ղարաբաղա իրեք ախպեր են» [62(62)]:

Երբեմն բանասացը սկսվածքից առաջ նախաբանով է հանդես գալիս, որը նպատակ ունի ունկնդրին բացատրել անցյալում գոյություն ունեցած և մոռացության տրված սովորությունները, ինչպես օրինակ՝ «Հին ժամանակ թակավորները կեղական շոր են հաքըմ՝ դարովիչնիս տներ ման են կյալի, եղելություն են իվաքըմ էլի ժողովուրդից: Մի թակավոր մի ըրուգու քյըմ ա մի տուն կոնախ ա ըլըմ» [46(46)], «Հին ժամանակներին ծնողին որ ծերացել են, ժառանգությունը ծնողին վեր ունիլիս ա ըլել տանիլիս մի հեռու սարըմ, պո-

նըմ իլլ անիլիս, կյալիս: Եղո, որ մի հետ ծերացել ա...» [64(64)]:

Ինքնատիպ կառուցվածք ունեն պատմական անմահաց մասին հեքիաթների սկսվածքները: Նմանօրինակ հեքիաթների հենց սկզբից պարզ է դառնում, որ խոսքը իրական անձնավորության մասին է, օրինակ՝ «Թաքավորը մի պրիկազ ա պոց թողըմ, որ ով որ իմաստուն Սողոմոնին քըքնի, նրան, մնչել իրան գյանքի վերջը ես նրա ապրուստը կտամ» [72(72)], «Սինն է Սողոմոն իմաստունիցը ասեմ» [73(73)], «Մի անքամ էլ Լենկ-Թեմուրը մի քաղաք ա գրավըմ» [75(75)], «Պարսկաստան Շահ Աբասի ժամանակ միշտ կյիլոթյուն ա ըլում» [76(76)], «Շահալու Շահաբազը և Խրան վազիրը գնըմ են իրանց գյուղերը, իրանց շրջանները ման գալու» [82(82)], «Դե սովորաբար կանայք բամբասանքով շատ են գրաղվըմ, շատ էլ սուտ-սուտ պոներ են ասըմ, ժողովուրին պանիկի մեջ քըմ: Շահ Աբազը տենըմ ա, որ...» [84(84)], «Շահ Աբազը իշխելու ժամանակը միշտ ուրուշ շոր ա հաքըմ» [87(87)]:

Հրաշապատում հեքիաթներն ունեն լավատեսական ավարտ, որը հաստատվում է հեքիաթի ավանդական կայուն վերջաբան-բանաձևով՝ «Երկնքից երեք խնձոր ա ընկնում, մինը՝ ասողին, մինը՝ ականց տընողին, մինը՝ լսողին» [2(2)], «...ինքը ամուսնանըմ ա էտ իրան պիրող տղայի հետ, ու տըրանք կյանք են վայելըմ: Տըրանով վերջանըմ ա» [7(7)], «Էտ տղեն եկավ նորից մեռնվեց, նորից ժամ քյնաց, Խյար բլբլիկ ըխչկա հետ նորից օխտը օր, օխտը քշեր հըրսանիք ըլավ: Նհանք Խրանց մուրազին հասնեն, տուք էլ ծեր մուրազին հասնե՞ք» [8(8)], «Քաչալն իրա մուրազին հասնի, մընք էլ մեր մուրազին հասնենք: Էլետ ըստանից հինգ խնձոր վեր ընգնի, մինը՝ ինձ, մինը՝ Ավետիքին, մինը՝ Չիլաբյանին, մինն էլ՝ են լսողներին» [9(9)], «Վերջը էտ մարթը իրա կնիկ պիրուց, հասան իրանց մուրազներին» [13(13)], «Էկան ապրեցին ըստը, մինչև սօր էլ ապրըմ են» [14(14), 15(15)], «Դե ըտի տոնա՞վ մե՞ծ պատմություն, էտ էլ տիե քյնաց, տրիենց քյնաց, քե մասաղ են» [19(19)], «Հմի տես ոնց պտտեց, ոնց եկավ, ոնց հաչողություն ստացավ» [24(24)], «Իրանք էլ ու-

տըմ են, խմըմ, ուրախանըմ» [31(31)], «Բարե-
խիղճ մարթիքը թող աշխարհըմ լի ու բոլ ըլեն,
ե՛ն ծկնորսն էլ քյնա իրան կյլլլխը քարերովը
տա» [35(35)]:

Յրաշապատում հեքիաթների ավանդական
կայուն վերջաբանը մաղթանք-բանաձև է, որը
երկու մասից է կազմված, առաջին մասը ուղ-
ղված է հեքիաթի հերոսներին, իսկ երկրորդ
մասը՝ ունկնդիրներին՝ «Նիւնք իրանց մու-
րազին հասնեն, մենք էլ մեր մուրազին հաս-
նենք» [3(3)], «Թող նրանք բախտավորվեն ի-
րանց միար, տուք էլ ծեզ համար բախտավոր-
վեք» [37(37)]: Մաղթանք-բանաձևի մի
տեսակն էլ տարամջատումն և որոշակի
ուղղվածություն է տալիս չարին ու բարուն՝
«խերն՝ ըստի, շառը՝ Բեջանանց տանը»
[12(12)], «խերն՝ ըստի, շառը Բեջանանց
քըթըլամանըմը կենա» [21(21)]:

Որոշ դեպքերում բանասացը, սյուժեից ել-
նելով, ավանդական վերջաբանը փոփոխու-
թյան է ենթարկել. «Էտ տղեն կյալիս ա ու հո-
րիցը հրաժարվըմ ա ու ասըմ ա.- Այլևս են քու
տղեն չեմ: Եսքան պնըմ պիիլիւց եղը, որ տիւ
իմն ուրենը հարգեցիր ոչ, մի խորթ մոր ծրենա
ուզըմ ես իմն բաղա տաս, մի տղա ունեմ, ե՛ն էլ
ուզըմ ես, որ չը ըլի, լա՛վն ե՛ն ա ես ռիւս
քաշեմ, քյնա՛մ երգրե-երգիր կորչեմ: Այ տիե
ա ըլըմ, իմ բալա» [1(1)]:

Կայուն բանաձևերը հրաշապատում հեքի-
աթի ժանրին ուղեկցում են նրա գոյության
ողջ ժամանակահատվածում, ուստի դրանք
դարերով հղկվել ու իրենց տեղն էլ գրավել
հեքիաթի համատեքստում: Հեքիաթի սյուժեի
զարգացմանը զուգընթաց՝ հեքիաթի որոշ
հատվածներում նույնպես ի հայտ են գալիս
կայուն կամ այսպես ասած միջամասային
բանաձևեր: Իջևանյան հեքիաթները հարուստ
են նման բանաձևումներով, օրինակ՝
«Խաբարը տանք էտ դմորիցը» [3(3)], «Շատ
էկան, թե քիչ, եկան հասան Սողոմ թաքավորի
հողը» [3(3)], «Օրերի մի օրը տիւնք էրկու
ախալերով որոշըմ են» [3(3)], «Էս ի՛նչ մարթ-
ըրթաֆտտ ա կյալի» [4(4)]:

Միջամասային բանաձևերի մի զգալի մա-
սը միտված է գործողությունը ընդհատելուն և
ուրիշ տեղում կատարվող գործողության

անդրադառնալուն, օրինակ՝ «Թող տա՛ քյնա,
խաբարը տանք էն մի ախալորիցը» [10(10)],
«Հմի խաբարը տանք որդիի՞ց, խաբարը տանք
էտ թաքավորիցը» [6(6)]: Որոշ դեպքերում
հեքիաթի հերոսի գործողություններն են կա-
յուն բանաձևով արտահայտվում, օրինակ՝
«Կյալիս ա, որ իննը ամիս, իննը ժամ, իննը
հրուպե, իննը միսուտը թըմա՛մըմ ա, տրան
էրկու տղա ա պիրըմ էտ կնիկը» [10(10)],
«Օխտն օր, օխտը քըշեր հըրսամիք արին,
կերան-խմեցին, իմն մի բաժակ արաղ չտվին,
սիե դրաղիցը թա՛մաշա արի էլի» [10(10)],
«Շատ քնեցին, թե քիչ քնեցին, էտ տղեն վե
կըցալ» [10(10)], «Շատ ա քյնըմ, քիչ ա քյնըմ,
իմի քյնըմ ա մի կետի հասնըմ» [11(11)], «Տու
իմն ես, ես քունն եմ» [11(11)]:

Հեքիաթի միջամասային բնորոշ են նաև բա-
նաձև-երկխոսությունները, որոնք տեղի են ու-
նենում աղջկա ու տղայի կամ հակառակորդ-
ների միջև՝ «Տու իմն ես, ես քունն եմ» [11(11)],
«Տու տուս մի կյալ, ես ե՛ն ա կամ ու կամ» [14(14)],
«Դրա ասողի լեզուն չորանա» [22(22)], «Հուփ
տամ, կուլ տամ» [22(22)], «- Այ իսան, ի՛նչ ես
չինում:

- Ես քու որթին եմ, քու ծիծ ծծում եմ» [2(2)]:

Դժվարին առաջարկանք կատարող հերո-
սին խորհուրդ են տրվում խոսքային բանաձև-
բանալիներ (սիրաշահում-բանաձև, զգուշա-
ցում-բանաձև), որոնք մի դեպքում հերոսն
ինքն էլ արտաբերում՝ սիրաշահելու ակնկալի-
քով. «Խվա՛ր, ես ա լա՛վըմ հա՛» [1(1)], «Խվա՛ր»,
քու ակնին մատաղ, էս ի՛նչ լա՛վ ճուր ա»
[1(1)], «Երանի ես ծարավ ըլեի, էս լա՛վ, պարզ
ճուր խմեի» [2(2)], մի այլ դեպքում հերոսը
լսում և զգուշանում է բռնվելուց. «Հա՛ւ, տա-
րան հա՛, տարա՛ն, փռնեցե՛ք հա՛ փռնեցե՛ք»
[1(1)], «Հազարի բըլբուլ տարա՛վ» [2(2)],
«Խյար բըլբուլի ըխչկանը տարա՛վ» [8(8)]:

Գրառված հեքիաթներում կարևոր տեղ են
գրավում նաև անեծքներն ու բարեմաղթու-
թյունները, որոնք ոչ միայն հարստացնում են
հեքիաթի լեզուն, այլև հմայական գորություն
են հաղորդում գործողություններին: Անեծքի
գորության մասին ժողովրդական հավատա-
լիքը հեքիաթներում անմիջականորեն ի կա-
տար է ածվում, և անեծքի ենթարկված հերոսը

իր վրա կրում է անեծքի բացասական ուժի դրսևորումը՝ «Ո՞րք անըծեն թեզ, տու հայար բլբուլի ըխչկանը պտահես» [8(8)], «Խվարի տրմ աչկերն» [6(6)], «Վա՛յ տու բեմուրազ ըլես, վա՛յ տու խըղզընդհատ ըլես» [18(18)], «Ա՛ մաղբուն ըլես, ա՛ մաիրըն ըլես, տու ո՞նց դես շենքը շինի, որ թաքավորի պալատին շող կաչի ոչ, շվաք ընգի», «Ի՛ ֆողեն կյուխներնուտ, մին մարթ ունեն, որ...» [17(17)]: Սովորաբար բարեմադրություններն ուղղված են այն հերոսին, որն իրագործել է անհնարին առաջադրանք և արժանացել երախտագիտության՝ «Վա՛յ ես քու ցավը տանեն, ես քու հոգուն մատաղ, ես թեզ դուրբան, որ իմ ախնական ազատեցիր» [21(21)]:

Վարպետ բանասացներն իրենց խոսքը հարստացնում են ոչ միայն կայուն բանաձևերով, այլև բազմաբնույթ համեմատություններով, ժամանակակից ունկնդրին հասկանալի դարձնելու համար նրան փորձում են հասկանալի ձևով բացատրել կենցաղավարումից դուրս եկած երևույթները, սովորույթները, կենցաղային և այլ բնույթի առարկաները, օգտագործում են նորաբանություններ («Անորժանակը հանըմ ա, ծաղիկ կրակ ա տալիս» [10(10)], «Նամակը փոշու են քցում» [11(11)], «Էտ մարթը քյնաց, քյնաց գյուղխորուրթին քյնավ» [6(6)], «Կնիկը հեռախոսով տալիս ա, կյալիս են, ամենքը իրանց պալատից կյալիս են» [20(20)]), ունկնդրին հայտնի պատմական դեպքեր ու դեմքեր⁶³, հեքիաթի սյուժեի մեջ հեքիաթային տեղանունների փոխարեն ներմուծում են ունկնդրին ծանոթ շրջակա միջավայրի տեղանունները⁶⁴, որ լսո-

ղը հստակ պատկերացում կազմի, թե հեքիաթի գործողությունները ինչպիսի վայրում են կատարվում: Այս բոլոր երևույթները պայմանավորված են ժամանակի և ավանդական միջավայրի կտրուկ փոփոխությամբ, և որպեսզի խզում չառաջանա անցյալի ու ներկայի միջև, նա միջամտում և հավելումներ է անում, որով մեծանում է նրա դերը: Բանասացի միջամտությունն առկա է նաև այն դեպքում, երբ բանասացը համամիտ չէ հերոսի գործողություններին ու վարքագծին ու թեև այն փոխել չի կարող, բայց հեղինակային խոսքի միջոցով իր վերաբերմունքն է արտահայտում, օրինակ՝ «Դմբոյի մինն ա, ո՞նց չդի ետ տառնում» [8(8)], «- Կքյնա հորըդ կասես, որ, ա՛ գերա...» [1(1)], «Պըռոշտին տառնավ ըսի մի կապեկ» [19(19)]: Համախ հիտուղ երևույթներից է բանասացի կողմից հեքիաթի սյուժետային գծի խախտումն ու դեպքերի անհամապատասխանությունը, որը ավագ սեռատարիքային խմբի բանասացների մոտ մոռացման, իսկ կրտսեր սերնդի բանասացների մոտ լավ չիմանալու հետևանք է (նկատվում է Ա. Համզայնի (Այգեհովիտ), Ս. Սարգսյանի (Լուսածոր) և այլոց պատումներում):

Ժողովածուում ընդգրկված պատմական անձանց մասին հեքիաթներն ու զրույցներն ապացույց են այն բանի, որ այս տարածքում հատկապես շատ են տարածված պարսից Սեֆյան դինաստիայի ինքնակալ Շահ Աբաս I-ի մասին զանազան պատումները, որոնք պատմական հայտնի իրողությունների⁶⁵, ասպատակությունների ու բռնազաղթերի հետևանք են: Շահ Աբասի դաժան ռազմավարությունն ու երկակի քաղաքականությունը խոսք ու զրույցների ու հակասական պատ-

⁶³ «Թե ասըն ա.- Բա 17 քվի պատերազմի վախը, սին, սին,- ասըն ա.- քու հորիցը չես, տու ուրիշ մարթից ես» [3(3)], «Կյալիս ա տեղեմ՝ են շահի հորիցը են մըհալը, որ դավենով ուրեմն պեղը պիրին ծախին *Նիկայայի* հողընը, եկել են առը-տուր են արել» [23(23)], «Ոնց որ մեզ մոտ Իջևանի միջին *Սնորեսա քյուլվեն* էր ամբոխս ուայունըն, տիանց կխավոր նաչակիկ են որոշեմ» [10(10)]:

⁶⁴ «Որդեղ ֆորս քյնաց, քյնաց ոչ, ուրենը *Ուսազլի* վրա քյնաց ոչ» [14(14)], «Եկան կրակեցին, մինը *Սևաթըրը* վեր ընգավ, մինը *Աջաճըրը* վեր ընգավ, են մինն էլ քյնաց կորավ, *Քոի* դրաղին վեր ընգավ» [15(15)], «Ոնց որ թե քյնացը ըստիան *Ծակ քարը*: Մի ճամփա *խոռոմ* ա քյնըմ, մինն էլ քյնաց դի *Ֆաշա քարով* վրա կյալ... Հրեղենիս

նստըմ ա քյնըմ, *Հասանի ուրքընը* հրեղենն ասըմ ա...» [3(3)], «Մեր էս *Սըռի դիշի* պես սին մի թուրմ ա» [5(5)], «Էտ ըրեխեն տյուս եկավ, մտավ էտ քաղաղ, ոնց որ թե *Երևանա Արովյան ուլիցը*, մեծ մի ուլիցա» [6(6)], «Էտ պալատը քոչի անց կենա *Քոի* էս դուը» [12(12)], «Էտ շաքիցը ասենք թե թուլ ա քյնացել *Վրաստան*» [14(14)]:

⁶⁵ *Խենճյան Է.*, Վիպականի և պատմականի փոխհարաբերությունը հայ բանասիրության շահաբայան սյուժեներում, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 1-2, 2006, էջ 48, 49:

մությունների տեղիք տվեցին, որի արդյունքում ծնունդ առնե բազում պատումներ թե՛ պարսիկների և թե՛ նվաճված ժողովուրդների միջավայրում: Շահ Աբասը ինչպես կյանքում հակասական ու երկակի բնույթ ուներ, այդպես էլ բանահյուսության մեջ հանդես եկավ երկակի բնույթով: Ժողովրդական բանահյուսության մեջ Շահ Աբասի անունն աղերսվում է որոշակի սյուժեների ու մոտիվների հետ (կնոջ անհավատարմության պատճառով ողջ կանացի սեռը ոչնչացնել, զնահատել կանացի խելքն ու իմաստությունը, փորձել ընդդիմանալ կանխորոշված ճակատագրին, ծաղկած շրջապայել երկրում և ամձամբ իմանալ մարդկանց վերաբերմունքը իր նկատմամբ, չիժացած բանը փորձով ստուգել կամ հասարակ մեկից (իմաստուն ծերունի, ձկնորս, հողագործ) իմանալ և այլն): Շահ Աբասի մասին սյուժեները պատկանում են պատմավիպական տեսակին, որոնցում առկա են թե՛ պատմական հիմք ունեցող դեպքեր ու անցքեր և թե՛ վիպական մոտիվներ, սակայն Շահ Աբասն արդեն որպես պատմական անձ չի ընկալվում, այլ վերաճել է պատմավիպական հերոսի կարգավիճակի, և ժողովրդական պատկերացումը նրա մասին տարբերվում է պատմական իրողությունից: Իրենց ինքնատիպությամբ ժողովածուում առանձնանում են իմաստուն Սողոմոնի, դաժան Լենկթեմուրի և Ալեքսանդր Մակեդոնացու (Ըսկանդռ) սյուժեները: Պատմական Ալեքսանդր Մակեդոնացու կերպարը, անցնելով ավանդական հավատալիքների ու սյուժեների բովով, արևելյան և հայկական բանահյուսական ժառանգության մեջ իր հաստատուն տեղն է գրավել որպես վիպական կերպար, և բանահյուսական որոշակի մոտիվներ առնչվում են նրա անվան հետ⁶⁶:

Արևելյան վիպական բանահյուսության անլեքանդրյան կարևորագույն սյուժեներից մեկը վիպական Ալեքսանդրի կողմից անմահությունն որոնելն է: Իջևանյան «Ըսկանդռը թաքավորի պատմությունը» հեքիաթի սյուժեի

մեջ պահպանված է հնագույն առասպելաբանական մոտիվը, ըստ որի՝ անմահության որոնումները հերոսին տանում են օվկիանոսից այն կողմ, այլ կերպ ասած, մեռյալների աշխարհը: Ինչպես ավեքսանդրյան մյուս գրույցները, այս սյուժեի ակունքները նույնպես գնում են դարերի խորքը, և այն զուգահեռներ ունի շումերաաքադական «Պիլգամեշ» էպոսի հետ:

Ժողովածուի վիպական բանահյուսության բաժնում սովորածավալ նյութերից է գրույցի ժանրը: Ջրույցների մի զգալի մասը տեղական ծագում ունի (օր.՝ «Տևամեր մածունն ու ծըմկաթուխ հացը», «Իջևանցին ու արջը», «Ըխարի տեղը» և այլն): Ի տարբերություն հեքիաթների, որոնց կենցաղավարմանը նպաստող ավանդական միջավայրն արդեն չկա, գրույցները և զվարճախոսությունները բանահյուսության առավել կայուն ժանրերի թվին են պատկանում, որովհետև դեռևս գործում է այն միջավայրը, որում կենցաղավարում և պահանջարկ են վայելում այս ժանրերը: Հատկապես զվարճախոսությունները ոչ միայն մեծ ժողովրդականություն են վայելում, այլև ժառանգում են ստեղծելի նոր սյուժեներ: Ժողովածուում ընդգրկված զվարճախոսությունների մի մասը տեղական ծագում ունի և ստեղծվել է իրական հիմք ունեցող զվարճալի դեպքերի հիման վրա (Բանահանց Հանես, Բայրամանց Մադո, Իրիցանց Վազգեն): Տեղական զվարճախոսությունների հիմքում ընկած են հերոսների միամտությունն ու պարզամտությունը: Ժողովածուում ներկայացված զվարճախոսություններից կարելի է ենթադրել, որ Աղստևի հովտի բնակիչները բավարարվում են ոչ միայն տեղական նշանակության զվարճախոսներով ու զվարճախոսություններով, այլև պատմում ու լսում են համահայկական (Ռուբեն, Պոլոզ Մուկուչ, վանցի) և միջազգային (Մոլլա Նասրեդին) զվարճախոսություններ:

Ժողովածուում ներկայացված են նաև ավանդազրույցներ և ավանդություններ, որոնց մի մասը ստուգաբանական են ու ներկայացնում են Կիրանցի կառուցման, Ազալի մատուռի, Օղդաքարի, Հարսնաքարի մասին նախնիներից ավանդված պատմությունները: Իջևանյան սեռատարիքային ավազ խմբի բա-

⁶⁶ *Խենյան Է.*, Երկեղջյուր Ալեքսանդրի հայկական պատումները և նրանց միաստասպելաբանական ակունքները, «Մովսես Խորենացի» գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, N 2, Ե., 2002, էջ 29:

նասացների երկացանկերում մեծ տեղ են գրավում նաև հուշապատումները, որոնցում անցյալ դարի գյուղական կյանքի ու կենցաղի, ժամանակի նշանավոր անհատների (Սևաքարեցի Սաքո) և անհավանական ու արտառոց իրադարձությունների պատմությունն է ներկայացված:

Ժողովածուի քնարական բանախյուսության բաժնում ընդգրկված են 3ամբարձման տոնին երգվող խաղիկները կամ, ինչպես ժողովուրդն է ասում, «Ջան գյուլումի խաղերը» և տարբեր բնույթի երգեր: Խաղիկները հիմնականում գրառվել են ավագ սեռատարիքային խմբի կանանցից. նրանցից ոմանք ղովարանում էին խաղիկն ամբողջությամբ հիշել, ուստի ներկայացնում էին միայն այն պատառիկը, որը հիշում էին: Իջևանյան գիտարշավների ընթացքում ուշադրություն գրավեց մի հետաքրքիր երևույթ, որը տարածված էր երիտասարդ կանանց ու աղջիկների միջավայրում: Դա «հիշատակ» կոչված չափածո պարզունակ քառատողերն են, հիմնականում սիրո թեմայով, որոնք գրվում էին նոթատետրերում: Գրառվել է մոտ 250 հիշատակ, որոնք պահվում են է. Խենչյանի ֆոնդում (FEI: 5887-6082 թվահամարների տակ): Ի տարբերություն վիպական բանախյուսության՝ քնարական բանախյուսությունն այս տարածքում աղքատիկ է: Ավանդական երգային բանախյուսության նմուշներին («Չորովել», օրորոցային) զուգահեռ՝ ժողովածուում ընդգրկվել են նաև սիրային, կենցաղային, մանկական երգեր, սգերգեր, ինչպես նաև աշուղական ու տեղացի ստեղծագործողների երգեր (Ա. Առուստայան, Թ. Չամբյան): Երգերի այս վերջին տեսակի կենցաղավարման տոկոսն ավելի բարձր էր. թերևս դա պայմանավորված էր լսողների և կատարողների միջավայրին հոգեհարազատ ու ծանոթ դեպքերով:

Բանախյուսության ինքնատիպ տեսակներից մեկը բանաձևային բանախյուսությունն է, որի ակունքները գնում են դարերի խորքը, և որը փոքր ծավալի մեջ խտացրել է ժողովրդի կյանքի, վարքի, պատմության, սոցիալական հարաբերությունների, կենցաղի, հոգեբանության, մտածելակերպի բազմապիսի

դրսևորումներ: Թեև բանաձևային ժանրի գրառումը որոշակի բարդությունների հետ է կապված, բայց վերջին տասնամյակի ընթացքում փորձ է արվել լրացնել այդ ժանրերի պակասը: Իջևանի բանաձևային բանախյուսությունը, լինելով համահայկական ասության բանախյուսության մի մասը, այն հարստացրել է նաև տեղական շատ ինքնատիպ ու այս տարածաշրջանին բնորոշ նմուշներով: Առած-ասացվածքներն ու դարձվածները ժողովրդական բանախյուսության ամենակենսունակ ու կենցաղավարող տեսակներն են, և Իջևանի շրջանում չկա մի ընտանիք, որ իր բանավոր խոսքի մեջ չօգտագործի նմանօրինակ դիպուկ ու իմաստուն ձևակերպումներ: Բանախյուսական այս տեսակները ոչ միայն հարստացնում են անհատի խոսքը, այլև ավելի արտահայտիչ ու կոնկրետ են դարձնում ասելիքը, որը երբեմն այլաբանորեն (առած), օրինակ՝ «Ծարավ եմ, ճուր չկա խմեմ, կյո՛րտն եմ կուլ տալի», «Կու՛ժը ճըրի ճամփին կկտորի», «Շունը շան ոտը կոխիլ չի, «Կալի տակի եզը կալիցը կտալի», երբեմն էլ ուղղակի, առանց գունագարդման դիմացի՝ եմ է հասցնում ասված միտքը, ինչպես օրինակ՝ «Դու՛կ խոսկը էշին կառեն», «Մարթի՛ թակ, վարթի՛ թակ», «Որդե՛ղ՝ մարթ, է՛նտե՛ղ՝ մահ», «Սարը, թու՛ղ չի տանի, մարդկությունը կտանի» և այլն: Երբեմն առած-ասացվածքներն ու դարձվածները որոշակի պատմության եզրահանգումներն են, օրինակ, Իջևանի գյուղերում տարածված «Կատուն պիթը տարել ա» առածի համար հիմք է հանդիսացել մի պատմություն ([156(556)], տես տողատակի ծանոթությունը): Մեկ այլ պարագայում բանասացը առածի հետ ներկայացրել է նաև պատմությունը: Օրինակ՝ «Մի աղբի ծակ էլ էտ կփակի» ([92(853)], տես տողատակի ծանոթությունը) արտահայտությունն ստեղծվել է օգտագործվում է Դիտական գյուղում: Առածի ձևավորման համար կարող է դեր խաղալ նաև շրջակա միջավայրը, ինչպես օրինակ, «Մի վարար չըլի, /Մի ծըծըծման կըլի» ([228(628)], տես տողատակի ծանոթությունը): Իջևանում (նախկին Քարվանսարայում) է ստեղծվել և կիրառվել «Լոք տամ Գյո՛ւճոս անել» դարձվածը,

որն այլաբանորեն նշանակում է շտապ ու վրայից ցատկելով՝ լոք տալով, սահելով ու շրջանցելով գործ, որի համար հիմք է ծառայել իջևանցի հաղթահասակ Գյրձգոսի (Կիրակոս) լոք-լոք տալով, շտապելով քայլելու հանգամանքը ([49(810)]), տես տողատակի ծանոթությունը)։ Ըստ բանասացի հաղորդած տվյալների՝ իջևանցիների սիրած արտահայտություններից է «Ղուղը վեր կապել» դարձվածը, որը նշանակում է ծայրը կտրել։ Իջևանի շրջանի գյուղերում տարածված դարձվածներից է «Պառավը ծոցն անել» ([121(282)]), տես տողատակի ծանոթությունը) դարձվածը, որն ուղեկցում է մի յուրօրինակ մրցույթի, երբ երեկոյան երեխաներին պառկեցնում են քնելու, և պառավը բաժին է հասնում ուշացող երեխային։ Մեր կարծիքով այս «պառավի» արմատները շատ խորն են, և այստեղ գործ ունենք «ջարու պառավի» գործառույթի դրսևորման հետ։ Իջևանյան ինքնատիպ դարձվածներից է «Տառը մըխտրեժան» [142(903)] արտահայտությունը, որը բանասացի կողմից ստուգաբանվում է որպես մահտարածամ, համաճարակ։ Իսկ «Քարը մտնել» դարձվածը օգտագործվում է այն դեպքում, երբ որևէ մեկը երկար ժամանակ էլ չի երևում։ Այս արտահայտության արմատները նույնպես շատ խորն են, այն աղերսվում է «Սասնա ծռեր» էպոսի չորրորդ ճյուղի գլխավոր հերոս Փոքր Միերի՝ Ազաովու քարում փակվելու հետ։ Քարում փակվելու մոտիվը առկա է նաև ժողովրդական հեքիաթներում։

Ժողովածուում ներկայացված բանաձևային բանախյուսության հաջորդ տեսակները անձեքի և օրինանքի ժանրերն են։ Անձեք-օրինանքները, առարկայական հիմք ունենալով հանդերձ, հոգեբանական իրողության դրսևորումներ են⁶⁷։ Անձեքներն ու օրինանքները օգտագործողի, ասացողի բացասական ու դրական ցանկություններն են, որոնց հմայական ներգործությանը մարդիկ հավատում են։ Անձեքները գոժում են մահ, ժբժախտություն, անբուժելի հիվանդություն, աղքատություն և սոցիալ-տնտեսական անելանելի վիճակ, նման

անձեքի ցայտուն օրինակ է 1972 թ. Դիտավանում և Բայրամյանից գրառածը.

Կնիկը ծննդկան ըլի,

Տանդ հաց չըլի,

ճրդացիդ հերթ չըլի,

Տունդ էլ կաթիլիս ըլի։

Նկատվում է ավանդական որոշ անձեքների տեղայնացման երևույթը. «Տերտերը դաքիտ քյնա» անձեքը, որը թաղման ծիսակարգն է ներկայացնում, Դիտավան գյուղում վերածվել է «Նիկոլը դաքիտ քյնա» ձևին, որովհետև Նիկոլ անունով մեկը միշտ թաղման թափորի առջևից տարել է դագաղի կափարիչը։ Նույն գյուղում «Տատկանց տների տակը քյնա» անձեքը նույնպես մահագույժ է, որովհետև գյուղի գերեզմանատունը գտնվում է Տատկանց (տոհմանուն է) տներից մերքև։ Ծայրագույն աղքատության ցանկությամբ են պայմանավորված «Մի ճուխտ մաշկով օխտը տուն մտնես» և «Տըռներիցը փուշի հվաքես» անձեքները։

Որոշ բանաձևերի ժանրային տարբերակումը, կախված արտասանական հնչերանգից, կարող է փոփոխություն կրել։ Օրինակ՝ «Ի՛, կրակվես տու», «Կլլխիտ ձին (ձյուն) գա» արտահայտությունները կարող են ընկալվել և՛ որպես անձեք, և՛ որպես դարձված, և՛ որպես հեզմական արտահայտություն։

Օրինանքներն ու բարենաղթությունները Իջևանի ազգագրական շրջանում մեծ մասամբ կիրառվում են հարսանեկան ծեսի, նշանադրության ժամանակ, նորածին երեխայի ծննդյան կապակցությամբ, հիվանդատեսության բնթացքում։ Հին Բարվանստայի (Իջևան) բնորոշ օրինանքներից է «Հորատանա, զորտիկանաս, Մեջտեղիցդ կեռտիկանաս», որով մարդուն մաղթում են այնքան երկար կյանք ու ծերություն, որ մեջքից կռանա։ Օրինանքներն ու բարենաղթությունները երկար կյանք, երջանկություն, բարի նպատակների ու ցանկությունների կատարում են կամենում այն անհատին, որին ուղղված են։

Բանախյուսության ինքնատիպ ժանրերից մեկը՝ հանելուկը, գրեթե դուրս է եկել կենցաղավարումից, և գրառված նյութի կրողները հիմնականում սեռատարիքային ավագ սերնդի բանասացներն են։ Իջևանի հանելուկներն

⁶⁷ *Հարությունյան Ս.*, Անձեքի և օրինանքի ժանրը հայ բանախյուսության մեջ, ե., 1975, էջ 124։

սկսվում են կայուն հարց-բանաձևով՝ «էն ի՞նչն ա, ի՞նչը, «էն ի՞նչն ա», երբեմն հանդես են գալիս առանց հարց-բանաձևի («Ան սնլւն, սիպտակ սնլւն, Նսաթունը միջին կալկալա»), երբեմն էլ հարց-բանաձևը տեղափոխվում է հանելուկի վերջնամասը (օր.՝ «Պունւնւր պը-տըրիան՝ Նսուշուրով լիզը: Նտ ի՞նչն ա»): Իջևանի հանելուկներում քողարկված են տվյալ տարածաշրջանին բնորոշ բուսական, կենդանական աշխարհը (մոշ, կաղին, սիմդրիկ, կրիա, մուկ), կենցաղում օգտագործվող իրերը (գութան, սանդերք, անձիկ, ծախարակ), մարդու մարմնի մասերը (աչք, բերան, քիթ) և այլն:

Ժողովածուում տեղ են գտել նաև հմայական աղորձների մի քանի տեսակներ (չար աչքի, հիվանդության և գայլկապի), հավատալիքներ, սովորույթներ, ժողովրդական բժշկություն, անձրևախափան, անձրևառաջացման ու կարկասախափան ծեսեր, ժողովրդական տոներ:

Ներկա ժողովածուում ընդգրկված նյութերը պատկերացում են տալիս XX դարի 70-ական թվականներից մինչև դարավերջ բանահյուսության և մասամբ էլ ազգագրության վիճակի մասին Աղստևի հովտի բնակչության միջավայրում: Ավագ սերնդի բանասացների ավանդապահության շնորհիվ պահպանված բանահյուսական արժեքների գրառումն ու ձայնագրումը հնարավորություն են տվել հիշյալ նյութերը փրկել մոռացումից ու կորստից: Վաղուց կյանքից հեռացել են այն շնորհալի բանասացները, որոնց սիրահոժար օգնությամբ կարողացել ենք պրպտել, գտնել ու գրառել բանահյուսական այն գանձերը, որոնք այսօր նրանց անունից հանձնում ենք գալիք սերնդին: Մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը բոլոր այն իջևանցիներին, ովքեր օգնել ու նպաստել են ի հայտ բերելու Աղստևի հովտի բնակչության հոգևոր գանձերը:

4

Գրառված 2625 բանահյուսական միավորից ժողովածուում ընդգրկվել է 1322-ը: Ժողովածուում կազմելիս առաջնորդվել ենք Աղստևի

հովտին բնորոշ ավանդական բանահյուսության առավել կատարյալ ու ամբողջական տարբերակները ներկայացնելու ցանկությամբ: Նյութերը դասակարգված են ըստ բանահյուսական սեռերի ու տեսակների (վիպական, քնարական, բանաձևային և ժողովրդագիտական): Բանահյուսական բնագրերի մի մասը գրառվել է ձեռքով, մի մասը ձայնագրվել է, գրառման ընթացքում պահպանվել են բարբառային բոլոր դրսևորումները, բանասացների արտասանական յուրահատկությունները, նույնիսկ լեզվական շեղումներն ու սխալները, մոռացման հետևանքով պատումի դեպքերի հաջորդականությունը խախտումը: Բանահյուսական բնագրերի արժեքը պահպանելու և հետագա գիտական ուսումնասիրությունների համար անաղարտ նյութ մատուցելու նկատառումով նյութերը փոփոխության չեն ենթարկվել, չեն խմբագրվել, պատումներն մեջ եղած շեղումներն ու սխալները նույնությամբ թողնելով, տողատակերում ծանոթագրվել և բացատրվել են: Տողատակերում են դրվել նաև բանասացի մեկնաբանություններն ու բացատրությունները: Երբեմն նույն բնագրում կարող են հանդիպել որոշ բանի արտասանական տարբերակներ, որոնք փոփոխության չեն ենթարկվել և չեն միօրինակացվել: Այն բնագրերը, որոնք բանասացի կողմից չեն վերագրվել, աստղանիշ են կրում:

Բանասացներից չորսը ծագումով Արևմտյան Հայաստանից են ու թեև երկար տարիներ բնակվել են Իջևանի գյուղերում, նրանց լեզուն բարբառային տեսակետից մի խառնուրդ է, որում առկա են թե՛ Իջևանի և թե՛ իրենց հայրենի բարբառի առանձնահատկությունները: Երբեմն պատումներում կարող են հանդիպել օտարաձուտ բառեր, որոնց իմաստը պարզ չէ, և բացատրված չեն, թեև համատեքստից կարելի է ենթադրել բառի իմաստը (օրինակ՝ *բաբաբաշ* [5(5)], *ավաղ* [88(88)]):

Ժողովածուում ունի ծանոթագրությունների աղյուսակներ, որոնցից առաջինում ներկայացված են յուրաքանչյուր բնագրի հերթական համարը ժողովածուում, ֆոնդային համարը, նյութի գրառման վայրը, ծագումը, տարեթիվը, բանասացը: Ծանոթագրության մեջ

տրված են յուրաքանչյուր հեքիաթի զուգահեռները՝ ըստ հայկական, հարևան ժողովուրդների հեքիաթների և հեքիաթների միջազգային տիպերի (ըստ Աարնե Թոմփսոնի հեքիաթների ուղեցույցի):

Երկրորդ աղյուսակում ներկայացված են տվյալներ բանասացների մասին և նրանց երկացանկը: Ամենաբեղմնավոր բանասացների կենսագրությունները ներկայացված են առանձին:

Ժողովածուն ունի նաև անձնանունների ու տեղանունների ցանկեր, բարբառային բառերի բառարան, համառոտագրություններ և օգտագործած գրականության ցանկ, ինչպես նաև ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ես իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Վարդանյանին և ՀՀ Տափուշի մարզպետ Արմեն Դուլարյանին, որոնց գործունե մասնակցությամբ ու օժանդակությամբ լույս աշխարհ է գալիս այս ժողովածուն: Իմ ջերմ երախտագիտությունն եմ հայտնում նաև ՀՀ ԳԱՍ Թղթակից անդամ Սարգիս Հարությունյանին և ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի այն աշխատակիցներին, որոնց աջակցությամբ այս ինքնատիպ ժողովածուն հանձնում եմ իջևանջիների ու համայն հայության դատին:

Էսթեր Խեմ՝23ԱՆ

06.11.2008



Կայան բերդ, X դ.




Իջևանն այսօր



Կիրանցի վանք, XIII-XIV դդ.



Մակարավանք, IX-XI դդ.



Մակարավանք, IX-XI դդ.



Խաչքար Գոշականից, XII-XIII դդ.



Գեղեցիկ, XII-XIII դդ.



Միջնադարյան կամուրջ



Քարվանսարա
(Իջևան), XIX դ. վ.



Իջևան, XXI դ. սկ.



ՀՀ Տավուշի մարզ



Նախկին ՀԽՍՀ Իջևանի շրջան,
որտեղից հավաքվել են ժողովածուի
բանահյուսական նյութերը